ԱՐՁԱԳԱՆՔ

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԻՆՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ — № 17 — 17 ՅՈՒՆԻՍԻ 1890

Բաժանորդագինն է տարեկան ՏԱՍՆ րուբլի, կէս տարուանը ՎԵՑ րուբլի։ Բաժանորդագրութիւնն ընդունվում է խմբագրատանը (Վելիամինովսկայա փողոց, քաղաքային վարչութեան տան հանդէպ)։ Ծաւրաքաղաքացիք պիտում են՝ Тифлисъ, Редакція иллюстрированной газеты „Ардзаганкъ“.

Ըրտասահմանից՝ Rédaction du journal illustré „Ardzagang“.

Առանձին համարների գինը 30 կ. — Յայտարարութիւնների բաւին 4 կ.



Մկրտիչ Սաւուսաարեան

(Ծն. ապրիլի 10, 1818 թ., † 19 մայիսի 1890 թ.)։

ԴՊՐՈՑԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ

—

Այս ուսումնական տարին սրվէն վերջացաւ, ամեն տեղ դպրոցներն արվէն փակուեցան, ժամանակ է ուրեմն առաջիկայի համար պատրաստութիւնները տեսնելու, ժամանակ է անցեալի վրայ մի հայեացք ձգելու, որպէս զի կարելի լինի անցած սխալներն ուղղել և թերութիւնները առաջն առնել:

Իսկական և դիտակցական յառաջադիմութիւնը հիմնուած է միշտ անցեալի ուղիղ ուսումնասիրութեան և ապագայ նպատակի իսկական ճանաչողութեան վրայ: Ինչպէս մի տնական մարդու կեանքում, նոյնպէս և ազգերի կեանքում նմանողութեամբ և կամ ասելի ճիշդն ասելով կապկութեամբ ձեռք բերած յառաջադիմութիւնը ոչ միայն տեւական և օգտակար չէ, այլ նաև վնասակար և անյոդական: «Արձագանքը» միշտ քարոզող է եղել դիտակցական յառաջադիմութեան և անողոք թշնամի այն յառաջադիմականներին, որոնք իւրաքանչիւր նորութիւն յառաջադիմութիւն են համարել և քարոզել:

Դպրոցական խնդիրներում մեր քարոզած յառաջադիմութիւնն էս նոյն բնաւորութիւնն է ունեցել: Մեր այս տարուան համարներից մէկում շեշտեցինք այն խնդիրը՝ թէ, մեր դպրոցական դործիչները ամեն ինչ աչքաթող արած և իրանց պարտականութիւններն իսկ երեսի վրայ ձգած՝ գործ են պարզրիլ իրանց համար դոյութիւն ունեցող ծրագրի վրայ յաճախուելն, որին նոքա ամեն չարեաց պատճառ են համարում:

Կան ուսուցիչներ, որոնք իրանց աւանդելի առարկան ոչ մի տեղ ուսած չեն, ուստի և ունայնաձեռն են պատարան մտնում և իյում են լսեղձ սանիկների ժամանակը առանց որ և է բան ուսուցանելու: Սոքա ամբողջ տարին և տարուան վերջն իսկ իրանց արդարացնում են ծրագրի թերութիւններով: Կան ուսուցիչներ, որոնք ստիպուած միայն, քանի մի կոպէկի համար են ուսուցչութիւնն անում և չը կարողանալով ոչ մի հետևանքի հասնել, արդարանում են ծրագրի թերութիւնները յառաջ բերելով:

Մի խօսքով եթէ դպրոցի շէնքը վատ է, ծրագիրն է մեղաւոր, եթէ աշակերտների թիւը պակաս է, ծրագիրն է մեղաւոր, եթէ ուսուցիչը իւր առարկան չը գիտէ՝ ծրագիրն է մեղաւոր, եթէ վարչութիւնը թոյլ է, էլի ծրագիրն է մեղաւոր...

Այս օրինակ ընդհանուր բողոքը թերևս արդարացի լինի դործին անծանօթներին, բայց մի փոքր անդրադարձութիւն անելուց յետոյ իւրաքանչիւր ոք պիտի համոզուի, որ այդ արդարութիւնը առ երեւոյթս է:

Լաւագոյնը միշտ թշնամի է լաւին, այս ընդհանուր հշմաշտութեան հիման վրայ չկայ աշխարհիս երեսին մի ծրագիր, որից լաւը երևակայել և ստեղծել կարելի չը լինէր. բայց մերթէ այդ իրաւունք է տալիս մարդուս անդոհ լինելով ներկայով, ոչինչ չը շինել լաւագոյնին հասնելու համար: Մենք արդէն ցոյց ենք տուել, որ մեր դպրոցական դործիչների միայն դատարկ բողոքարկութեամբ ժամանակ վատնելը նրանց ապիկարութեան ապացոյցն է:

Ուսուցումն մի այնպիսի գործ է, որի ամենանեղ սահմաններում իսկ կարելի է անչափ ազատութեամբ շարժուել, միայն թէ ուսուցողը պէտք է իւր գործն հասկանայ և իւր առաւետն ուսած լինի:

Մեր ուսուցիչներից և տեսուչներից շատերը տգէտ են մանկավարժութեան, այսինքն իրանց արուեստին:

Այս է ահա մեր դպրոցական կեանքի ամենամեծ թերութիւնը: Այս է ահա այն չարիքը, որի առաջը պէտք է առնել:

Կար ժամանակ, երբ իւրաքանչիւր դպիր՝ այսինքն գրաճանաչ մարդ կարող էր ուսուցիչ լինել և էր իսկ: Այդ շրջանն արդէն անցրել են մեր դպրոցներն:

Կար ժամանակ, որ իւրաքանչիւր դպրոցումն եղած ոք, չնայելով թէ արդեօք աւարտի՞լ է նա այդ դպրոցը և կամ առ հասարակ քիչ տեսակ դպրոցից է, ընդունելում էր ուսուցիչ: Այդ շրջանն էս ունեցան մեր դպրոցները, և այժմ ձգտում են դուրս գալու նրանից:

Դպրոցական կեանքում վտանգաւոր շրջանն այս իսկ է, որովհետև անցողական շրջան է այս: Տգէտ ուսուցչի տուած վնասն այն է, որ նա կամ ոչինչ չի սովորեցրել և կամ շատ քիչ բան կը սովորեցնի և այն էս սխալներով: Սորա հակառակ դիտուն ուսուցչի տուած վնասն երբեմն այն է՝ որ նա շատ բան ուսուցանել ձգտելով, քիչն էլ չի սովորեցնիլ: Սակայն մեծագոյնն է այն չարիքը, որ կարող են պատճառել կիսակիրթ և համբակ ուսուցիչները, որոնք մի ամփոփ բան ուսած չեն երբէք և որոնց դիտակցութիւնը լի է կիսատ և թերատ մտապատկերներով և դաղափարներով: Սոքա վտանգաւոր և վնասակար են նա մանաւանդ այն պատճառով, որ չըմբռնած և սխալ հասկացած դաղափարներով անհեթեթ դաղափարների են հասնում, որ մոլեռանդ կլերպիս քարոզում են:

Այս պատճառաւ մեր դպրոցների վարիչները մեծ դգուշութեամբ պէտք է վարուին ուսուցչաց ընտրութեան ժամանակ: Անցեալ տարուան Թիֆլիզու թեմի դպրոցներում պատահածքանի մի փորձեր բաւական պարզ ապացուցանում են մեր ասածները: Կիսակիրթ և ճամարտակութեան վարժ համբակներ, որոնք պատահաբար միայն ուսուցիչ են, կարող են մեր դպրոցների մէջ աւերիչ ազդեցութիւն ունենալ, ուստի ցանկալի էր, որ նոցա թիւը ինչքան կարելի է նուազեցնուէը: Իջմիածնի ուսումնական խորհուրդը վեհափառ Կաթուղիկոսի հաճութեամբ արդէն ցուցակներով որոշեց ուսուցիչներ, այժմ մնում է միայն, որ այս տարուանից իսկ զտուին այդ ցուցակները, դուրս հանուին ուսուցչական ցանկից այնպիսի անճանց անունները, որոնք պատահաբար միայն ուսուցիչ են, ոչ պատրաստութիւն և ոչ կոչումն ունին:

Ճեմարանի և Ներսիսեան դպրոցի սանները, որոնց նախապատրաստութիւնը քիչ շատ երաշխաւոր է նոցա ապագայի համար, այժմ այնչափ շատ են, որ կարելի էր սրդէն նոցանով բաւականանալ և հեռացնել դպրոցներից անպատրաստներին:

Իջմիածնի ցուցակի մէջ այնքան դասակարգեր կան, որ դժուար է մինչև անգամ յիշել, կարծում ենք, որ կարելի է այժմ այդ դասակարգերը նուազեցնել, հանելով այնտեղից խալիֆաների, դրագիրների, տիրացուների և մեր ու տէրութեան վարժարաններից թերատ գիտութեամբ արձակուած կամ դուրս եկած անձանց անունները:

Այսպէս մաքրելով ուսուցչական դասակարգը, չէ կարելով միայն բաւականանալ: ժամանակ է, որ տեղական վարչութիւնները, մանաւանդ սրբազան առաջնորդներն և յաջորդները գեկուցումներով Իջմիածնի կենդրոնական վարչութեան ծանօթացնեն իրանց խնամքին յանձնուած դպրոցների դործիչներին, որպէս դի նոքա կարողանան վստահ լինել, որ այն նպատակն և ուղղութիւնը, որ ունին և պէտք է ունենան մեր դպրոցները, միշտ պահպանեն:

Ջարմանալի ժամանակներումն ենք ապրում մենք: Այն մարդիկը, որոնք միշտ աղնուութիւն, յառաջադիմութիւն և [illegible] այսպիսի բառեր են կրկնում, իրանց իրաւունք են համարում և աղնուութիւն են վարկանում ծաղրել այն հիմնարկութեանց մէջ, որոնց նպատակին և ոգուն հակառակ են:

Դժուարին է այդպիսիներին հասկացնել,

որ ազնուութիւն չէ մտնել մի պարոց և ուսուցչութիւն անել այնտեղ, ուր աւանդելի սկզբունքները բոլորովին հակառակ են իրանց ձգտման և ուղղութեան:

Այդ պարոնները իրանց իրաւունքն են համարում ուրիշից ազնուութիւն պահանջել, իսկ իրանց աչքի գերանները չը տեսնել: Այսպիսեաց կարծիքով բթացնում են մեր պարոցները, որովհետև այնտեղ ուսուցանում են մեր նախնեաց գաւանութիւնը և մեր սուրբ Հարց հրաշալի շարականները, ուստի նոքա հացի խնդրից ստիպուած ուսուցչութիւն անելով, իրանց պարտքն են համարում արհամարհելի դարձնել ոանիկների աչքում, պարոցն և պարոցական առարկաները:

Այդպիսիներին անհնար կերպիւ պէտք է հալածել, նոյնիսկ էլ պիտի մաքրել մեր պարոցները: Այս կարևոր է նոյն իսկ յօգուտ այդ իսկ ազատամիտների, որոնք թէև այսօր պատահաբար ազատամիտ ուսուցիչ են, վաղը նոյնպիսի պատահարի շնորհիւ կարող են քաշուել դառնալ...

Ուսուցչաց ընտրութիւնը և պարոցների վրայ կանոնաւոր հսկողութիւնը հնարաւոր է միայն աջակցութեամբ:

Երկէն իսկ խնամք են տարում թեմերում տեսուչներ նշանակելու, Թիֆլիզում թեմը այս տարուանից կ'ունենայ իւր թեմական տեսուչը, յանկանանք, որ օր առաջ միւս բոլոր թեմերն էլ ունենան տեսուչներ, որոնց միջոցաւ միայն կարելի է հսկել պարոցների ընդհանուր յառաջադիմութեան և ուղղութեան վրայ: Թեմական տեսուչների աջակցութեամբ միջոց կը տրուի և կենդրոնական վարչութեան հսկելու իւր խնամքին յանձնուած պարոցների վրայ և հեռացնելու այնտեղից անպատրաստ և վնասակար անձանց:

Ուսուցիչների մի որոշեալ և ընտրուած դասակարգ կազմելով պէտք է մտածել և նոցա ապահովութեան մասին: Մեր առաջարկած ձևով կազմուած ուսուցչական դասակարգը դեռ էս հաստատուն չէ: Յայտնի է, որ շուտով լրանում է այն ժամանակամիջոցը, որի ընթացքում մեր ծխականների ուսուցիչները պէտք է քննութիւն տան տէրութեան պարոցներում և վկայական ստանան:

Այս մի շատ լուրջ խնդիր է. ինչքան մեզ յայտնի է, մեր քանի մի պարոցների ուսուցիչները միայն օգտուել են այդ ժամանակամիջոցից, եթէ այսպէս անհոգ գրտնուինք, մեր պարոցները վակուելու վտանգի մէջ կը լինեն, պէտք է շուտափոյթ դարման հասցնել այդ ցաւին:

Կարծում ենք, որ մեր պարոցական վարչութիւնները այս նպատակին հասնելու համար մէկ հաստատուն և արագ միջոց ունին: Այս առաջիկայ ուսումնական տարուանից իսկ նրանք պայման պիտի կապեն բոլոր ուսուցիչների հետ, որ նորանք անպատճառ մի տարուայ ընթացքում քննութիւն տան: Հաստատապէս կարելի է ասել, որ մեր առաջարկած կերպիւ ընտրուած ուսուցիչներից քչերը միայն կը գտնուին, որ չը կարողանան այն թեթև քննութիւնը տալ, որ պահանջուում է: Աւելի դիւրութեամբ այս նպատակին կարելի էր հասնել, եթէ պարոցական վարչութիւնները ամարայլին արձակուրդներին կոմնակի նպատակներ իսկ նշանակէին իւրեանց ուսուցիչների համար, որ կարողանան Տիֆլիսում պատրաստուիլ և քննութիւն տալ:

Յարդ ասածներս վերաբերում էին գլխաւորապէս ծխական պարոցներին և նոցա ուսուցիչներին. բայց նորանք ճշմարիտ են մասամբ նաև մեր պարանոցների վերաբերութեամբ:

Պարանոցների խնդիրներն աւելի բարդ են և բազմատեսակ, նրանց համար էս կան այնպիսի անհրաժեշտ խնդիրներ, որ լուրջ քննութեան պէտք է առնուին: Մեր դպրանոցներից շատերը դեռ կազմակերպուած չեն, մի քանիսը շեղուում են իրանց նպատակից և կանոնադրութիւնից, մի քանիսի վարչութիւնը անհոգ է և վայրի վերոյ. իսկ լաւագոյներն էլ ունեն այսպիսի թերութիւններ, որ եթէ օր առաջ չը լրանան, իրանց նպատակից կը վրիպին:

Անշուշտ սխալ ընթացք կ'ունենայ օրինակի համար մի դպրանոց, եթէ նորա ղեկը յանձնուած լինի մի բժշկի, մի վաստաբանի, մի ընագէտի կամ մի արհեստաւորի:

Անշուշտ վնասակար են մի դպրանոցի համար այնպիսի գործիչներ, որոնք միայն հացի խնդրով են կապուած նորա հետ, կամ այնպիսի անձինք, որ զուրկ են այլ կերպիւ ապրելու միջոցներից:

Անշուշտ կանոնաւոր ընթացք չեն կարող ունենալ այն դպրոցները, ուր ուսուցիչները չեն համակրում դպրոցի նպատակին, կամ ուր վարիչների խումբը չէ հետաքրքրուում դպրոցով, այլ կուսակցական ոգւով և այլն և այլն:

Մեր դպրանոցների անհոգ վարչութեանց, պատահական տեսուչների, տգէտ ուսուցիչների, անզօրծութիւնից ստիպուած վարժապետների, իւրեանց մասնագիտութիւնից յետ մնացած և մանկավարժութեան հետը չառած դաստիարակների և աղքատ աշակերտների մասին առաջիկայ յօդուածում կը խօսենք:

Վեհափառ կաթուղիկոսի մշակած իրենամքը և հոգատարութիւնը վայելող թեմական դպրանոցները նորից դարձան նորին Ծձութեան առանձին իմն ուշադրութեան առարկայ: Այս օրերս ստացուեցաւ Թիֆլիզի Ներսիսեան Դպրանոցում գերապատիւ առաջնորդի միջոցաւ Վեհափառ Կաթուղիկոսի մի կոնդակը, որի նպատակն է, ինչպէս ասուած է բնագրում, համապատշաճ բարձրութիւնից հետ թեմական դպրանոցները վերածել ի շաւիղս կանոնաւոր ուղղութեան: Այս նպատակով, ասուած է կոնդակում, Վեհափառ Կաթուղիկոսը բարեհաճել է հրամայելու, որ հետեւեալ երեք պայմաններին համեմատ դրծէ հոգաբարձութիւնը ուսուցիչներին ընտրելիս, որոնք բոլորը այս կանոնով արձակուած են համարում առհասարակ:

Նախ՝ պատուիրուում է ընտրել դիտութեանց մէջ հմուտ, բարեբարոյ, և դաստիարակութեան միանգամայն նուիրուած անձինք:

Երկրորդ՝ հրաւիրել ուսուցչութեան նոցա, որոնք աւարտել են իրանց ուսման ընթացքը բարձրագոյն ուսումնարաններում, ճեմարանի մասնագիտական բաժնում կամ թէ յայտնի են իրանց վարքաութեամբ:

Երրորդ ամեն տարի ընտրուած ուսուցիչների անուանական ցուցակը պիտի ներկայացուի Ի վեհափառական Հաստատութիւն Վեհափառ Կաթուղիկոսի: Կոնդակի այս վերջին կէտի նպատակն է անկասկած մասամբ դոնէ ապահովագրել հոգատարձութիւնների կամայականութիւնը և միջոց տալ հաստատուած ուսուցչին ապահով կերպով շարունակելու իւր գործը և ոչ թէ, ինչպէս այժմ է, ամեն րոպէ երկիւղի մէջ մնայ: Մի վարքը պժուալութիւն թերևս կը յարուցանէ երբորդ կէտի դարձգալութիւնը:

Կարևոր է որոշել, թէ որքան տարուայ ուսուցչութիւն պէտք է համարել ապացոյց հմտութեան և վարձատրութեան: Վեհափառի կոնդակը այս խնդրի մեկնութիւնը երևի թողնում է հոգատարձուների

բարեհաճեցողութեանը, որոնք սակայն կարող են առթիւ կերպով վճռել այս հարցը դանազան պարագաներում։ Լիտոյս ենք, որ վեհափառ կաթողիկոսի նոր կոնդակը կարգի տակ կը դնէ մեր թեմական դրպրոցները և կը մօտեցնէ ցանկացած օրինաւորութեան կերպարանքին։

Իսկ ինչ վերաբերում է Ներսիսեան Դպրանոցին՝ մի քանի առիթ առաջ ներկայ Ֆեր. առաջնորդն և պ Սեդրակ Մանդինեանի ներկայացրած զեկուցման արդիւնքները այժմ անկասկած առանձին ուշադրութեան կ՚արժանանան։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

† ՄԿՐՏԻՉ ՍԱՆԱՍԱՐԵԱՆ։

ՆԱՄԱԿ ՓԱՐԻԶԻՑ.

ՄԵԾԱՆՈՒՆ ԲԱՐԵՐԱՐ ՄԿՐՏԻՉ ՍԱՆԱՍԱՐԵԱՆԻ ՄԱՍԻՆ։

Մկրտիչ Սանասարեանը Ֆրանսիայի նիցցա քաղաքում հաղիւ թեթեւանալով իւր երկար ժամանակեայ նեղիչ հիւանդութիւնից, ճանապարհ է ընկնում դէպի Փարիզ, այն նպատակով, որ այնտեղ փոքր ինչ հանգստանալուց յետոյ վերադառնալով իրա բնակավայրը, կարողանար շարունակել աղօթատ և բեղմնաւոր բարեգործութիւնները. սակայն հէնց գալս գալով նիցցայից և հասնելով Մարսէյլ, չարաղուշակ հիւանդութիւնը կրկնւում և սաստկանում է։ Այնտեղ իսկոյն դիմում է տեղական բժիշկների օգնութեան, որոնք հիւանդին լաւ քննելուց յետոյ տեսնում են որ դրութիւնը ծանր է. պատուիրում են անմիջապէս գնալ Փարիզ, որպէսզի գուցէ տեղւոյս աշխարհահռչակ բժիշկները կարողանան օգնել. և ահա մեր մեծ բարերարը իսկոյն գալիս է Փարիզ և հրաւիրում է՝ ներքին հիւանդութիւնների բժիշկ Dujardin-Beaumetz-ին, որ համարւում է այժմեան ժամանակի բժիշկների թագաւորը և մի հայ ուսանող բժշկի, որը ամբողջ օրը մօտն էր լինում և կատարում բժշկի յանձնարարութիւնները։ Չնչաւոր բժշկի դիտութիւնը, չը կարողացաւ ոչինչ անել բնութեան օրէնքի դէմ և մեր ազգի մեծ բարերարը մայիսի 31-ին երեկոյեան ժամի 6-ին կնքեց իւր մահկանացուն այս օտար երկրի մէջ, թողնելով ամբողջ հայ ազգը ողբալի դրութեան մէջ։ Հանգուցեալը մինչև իւր վերջին շունչը լաւ և հանգիստ գրութեան մէջ էր և խօսակցութիւնը կանոնաւոր, նոյն իսկ վերջին րոպէին կարողացաւ նամակ գրել իւր բարեկամ Ռձադանքի խմբագիր մեծապատիւ պարոն Աբգար Յովհաննիսեանին։

Մեր մեծ բարերարը մեռաւ այստեղ գրեթէ անկայտութեան մէջ, հայերից ոչ-ոք չէր իմանում նորա այստեղ գտնուիլը, այնպէս որ նոցանից ոչոք չը կարողացաւ այցելութեան գնալ և տալ իւրեանց բարերարին վերջին մխիթարանքը։

Մահուան երկրորդ օրը հանգուցեալի դիակը զմռսեցին Թիֆլիզ ուղարկելու, բայց Մարսէլից շոգենաւի գալու օրը դեռ ևս ուշ լինելով, տարան տեղւոյս Պերլաշէզ գերեզմանատունը ուր մնաց մի շաբաթ աչքի։

Ամսոյս 11-ին, չորեքշաբթի, առաւօտեան վաղ, ժամի 9-ին հայերը, թէ ուսանողները և թէ վաճառականները շտապում էին յիշեալ գերեզմանատուն գոնէ վերջին հրաժեշտը տալու իրանց Մեծանուն բարերարին։ Այստեղ փայլում էին իւրեանց բացակայութեամբ փարիզաբնակ պճնազարդ հայ կանայք, ներկայ էր մեծ մի կովկասցի ընտանիք։ Դադաղի վրայ հայ հասարակութիւնից երկու պսակ դրուեցաւ հետևեալ դրութիւններով —«Ազգ Մեծ բարերարն Մ. Սանասարեան—Փարիզի Հայ-Ուսանողական Միութիւնն»։ Երկրորդի վրայ —Au Grand patriote bienfaiteur national Mekertitch Sanassarian La colonie Arménienne de Paris»։

Կարգադրեցաւ մի քանի ճառեր ուսանողների և վաճառականների կողմից. 1) պ. Տաղավարեան—երկրաչափ դիւղատնտես, մի ժամանակ էլ Պօլսում հրատ. «Գիտական շարժում» թերթի խմբագիրը—վաճառականների կողմից. 2) Դ՚Էգանց (պ. Տէր-Սարգսեան), վանեցիների կողմից. 3) պ. Յ. Մելիք-Բախտամեանը, գիւղատնտեսութեան ուսանողների կողմից, 4) պ. Յովհաննէս Բրուսալեան «Հայաստան» խմբագրի կողմից, և 5) պ. Մելիք-Բաբալեան իրաւաբանութեան ուսանող՝ դարձեալ ուսանողների կողմից, վերջնոյս ճառը փոքր ինչ ուշացաւ պսակի պատրաստման աւելով։

ԽԱՄՍԱՅԻ-ՄԵԼԻՔ։

Փարիզ 12-ն Յունիսի (Ն. Տ.)

ՃԱՌ

ՍՏ. Ս ՏԻՎԿԱՆՑԻ ԽՕՍՔԸ ԴԱՄԲԱՆԱԿԱՆԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆԸ։

Ներեցէք ինձ Տէարք, որ իրրև վանեցի իմ մեծադոյն Հայրենակցին՝ Սանասարեանի յիշատակին յարգանաց մատնակցիմ երկու խօսքով։

Ի սէր Հանգուցեալ անմահ բարերարին կենսագրութեան մանրամասնութիւնն չի պիտի ընեմ, այս կարևոր պարտք աղդային պատմութեան կը վերաբերի, յորում Մկրտիչ Սանասարեան իւր գործերովն պատմութեան հատոր մ՚է ինքնին։

Յաւ եղաւ ինձ և ձեզ ամենիդ անշուշտ որ վախճանարձ մխիթարութիւն չունեցանք պարոն մեծադոյն բարերարի հիւանդութեան և մահուան սնարին մօտ գտնուիլ, գէթ այժմ իւր տխուր դադաղի շուրջ բոլորելով, երախտագիտական արժանաւորագոյն պարտք մը կատարած կը լինինք։

Կայ ժամանակ մը որ ժողովրդոց ամենէն մեծ, ամենէն նուիրական մարդիկ մասնաւորապէս եկեղեցական ուրբերն էին իրանց ճգնութեանց, աղօթից և հրաշից զօրութեամբն, այլ ժամանակ, գարեր ու դէպքերու հետ պէտքերն ալ փոխուած, արդի ուրբ մարդիկ այն հաղուագէպ մահկանացուներն են, որ ամբողջ ժողովրդեան մը, ազգի մը ողջոյն կեանք տալու հրաշից զօրութիւնն ունին։

Ահա, Սանասարեան գարուս այդ մեծ մարդիկներէն, այդ անմահ մահկանացուներէն է, որ երբ Հայոց եկեղեցին հայ ուրբերու յատուկ տօնացոյց մ՚ունենայ, յաւիտեանս պիտի յիշատակէ ազդային սոյն բարերարը, որոյ մահուան համար վասպուրական կուլայ, Կարին կուլայ, Կիլիկիայէն մինչև ցԱրարատ աշխարհ վշտակիր ամբողջ Հայաստան ցաւ կը զգայ։ Կուլան Սանասարեանի որբացեալ սանուկք Խաչօն, Ակօն ու Մկօն, այն գեղջուկ որբեր, որ 1830-ին պատերազմի, սովի, համաճարակի արհաւիրքներէն, ձիւներու կոյտերու տակէն իմ ձեռքովս հաւաքած, մահուան ճիրաններէն ճողոպրած այդ լքեալ մերկ ու անօթի մանուկներ՝ երբ իրենց խէրն ու մէրը արդին սրբամահ կամ սովամահ եղած էին, զիրենք Սանասարեանի որդեգրութեան յղած եմ, այժմ այդ լքեալ ճժեր քսանամեայ առոյգ և ուսեալ երիտասարդներ են. Հայաստանի ամէն գաւառներէն հաւաքուած բազմաթիւ են Սանասարեանի այս օրինակ սոներ, որք մէկ մէկ անձնուէր և հմուտ մշակներ պիտի դառնան հայրենի փշալից դաշ-

տերու աշխատութեան համար, պատրաստեալ։

Ահա, թէ ինչպէս հայ մ՚էր այն գազաղին մէջ հանգչող ամուրին, հազար երանի իրեն, որ հազարաւոր վերանորոգող գաւակաց հայը պիտի կոչի ապագային։

Կարգ մը բարեգործներ ունինք մենք, որ մէկ փարայի համար տաս փող քսան շեփոր կը հնչեցնեն իրանց առջևէն ու ետևէն. Սանասարեանն լռելեայն իր խրոճի ձայնովն միայն գոհ կըլլար, իրան դիմողին՞ կ՚օգնէր, զամէն կը միխիթարէր։

Սանասարեանը ոչ միայն սրտի տէր հայ մարդ էր, այլ և հանճարի մարդ. անմահ բարերարն ի՛ր այնպիսի ժամանակ Հայաստանի կենդրոնի մէջ լուսոյ այն մեծ խոբան բացած վառ կը պահէ, երբ ամէն կողմէն մեր տնակներու, մեր հիւղերու ցած եմ, ամէնքն ալ արժանաւոր, ամէնքըն ալ տաղանդաւոր, մէկ մէկ լուսաւոր ջահեր են իրանց շրջանի մէջ։

Այսպէս, Սանասարեանը՝ ի կենդանութեան իր մեծամեծ գոհողութեանց արդիւնքն տեսնելու բարձրագոյն հաճոյք ու միխիթարութիւն կը վայելէր։ Ինքն անբաղդատելի օրինակ մ՚է հայ բարերարաց մէջ։

Այո, ապրել դիւրին է և մեռնել բնական, անթիւ են մարդիկ, որոնք անճանօթութեան մէջ կապրին ու կը մեռնին որպէս թէ ծնած չը լինէին. բայց մահկանացուած ամբոխին մէջ Սանասարեաններ սակաւք են յոյժ, որ ազգի մը չափ երկայնակեաց լինեն և անմահ մնան։

Այո, այո, դու կապրիս Սանասարեան, դերեզմանիդ վիհն ու հող անկարող է ծածկել քու յիշատակն, Մասեաց սարն քու անխախտ արձանն է, Սանասարեան վարժարանը քու անմահութեան արձանագիրն։

1890, Յունիս 11|30, Փարիզ—Փէռ-Լաշէզ։

***

Արտասահմանի մի հայ լրագրից.

Ազգային բարերար Հանգուցեալ Մկրտիչ Սանասարեանի զմռսուած դիակը Փարիզէն շոգեկառքով բերուեցաւ երէկ Մարսէյլ։ Տեղիս հայ գաղթականութիւնը դնաց երկաթուղու կայարանը դիմաւորեց դագաղին։ Այնտեղ Սրժ. Տ. Սահակ քահանայն ըստ սովորականին կարգաց եկեղեցական աղօթքներն Հանգուցեալին վրայ։ Կրօնական մասը լրանալէն յետոյ, տեղիս հայ գաղթականութեան Հոգաբարձուներէն մէկ առ կայծեալ ճրագներն անգամ փչել մարել կը ջանան...։

Հոչակաւոր այս բարերարի ձեռնարկութեանց յաջողութիւնն մասնաւորապէս ազգն կը պարտի և պ. Կարապետ Եզեանցին՝ Հանգուցելոյն մտերմի իմաստուն և հզօր աջակցութեանց։

Ոչ միայն այսչափ, այլ և Սանասարեանը իբրև գործի և հաշուի մարդ քառորդ դարէն աւելի բազմաթիւ ընդունակ պատանիներ յԵւրոպա յղած և գիտութեանց զանազան ճիւղերուն մէջ պատրաստելով իւր ուսումնարանի շէնքը այդ հաստատուն հիմանց վրայ կառուցած է, Վարդանեան, Մանդինեան, Մադաթեանները, Սօղիկեան, Սբուլեանց և այլք, զորս անձամբ ճանաչելու պատիւն ունեցած եմ, ամէնքն ալ արժանաւոր, ամէնքըն ալ տաղանդաւոր, մէկ մէկ լուսաւոր ջահեր են իրանց շրջանի մէջ։

Այսպէս, Սանասարեանը՝ ի կենդանութեան իր մեծամեծ գոհողութեանց արդիւնքն տեսնելու բարձրագոյն հաճոյք ու միխիթարութիւն կը վայելէր։ Ինքն անբաղդատելի օրինակ մ՚է հայ բարերարաց մէջ։

Այո, ապրել դիւրին է և մեռնել բնական, անթիւ են մարդիկ, որոնք անճանօթութեան մէջ կապրին ու կը մեռնին որպէս թէ ծնած չը լինէին. բայց մահկանացուած ամբոխին մէջ Սանասարեաններ սակաւք են յոյժ, որ ազգի մը չափ երկայնակեաց լինեն և անմահ մնան։

Այո, այո, դու կապրիս Սանասարեան, դերեզմանիդ վիհն ու հող անկարող է ծածկել քու յիշատակն, Մասեաց սարն քու անխախտ արձանն է, Սանասարեան վարժարանը քու անմահութեան արձանագիրն։

1890, Յունիս 11|30, Փարիզ—Փէռ-Լաշէզ։

***

Արտասահմանի մի հայ լրագրից.

Ազգային բարերար Հանգուցեալ Մկրտիչ Սանասարեանի զմռսուած դիակը Փարիզէն շոգեկառքով բերուեցաւ երէկ Մարսէյլ։ Տեղիս հայ գաղթականութիւնը դնաց երկաթուղու կայարանը դիմաւորեց դագաղին։ Այնտեղ Սրժ. Տ. Սահակ քահանայն ըստ սովորականին կարգաց եկեղեցական աղօթքներն Հանգուցեալին վրայ։ Կրօնական մասը լրանալէն յետոյ, տեղիս հայ գաղթականութեան Հոգաբարձուներէն գաղթականութեան կողմէն խոլին ցաւակցութիւն յայտնելով մի ճառ խօսեցաւ և բացատրեց անմահ Սանասարեանի գործունէութեան մեծ նշանակութիւնը և անոր մահուամբ ազգին եղած պառն կորուստը։

Գագաղը կայարանէն փոխադրուեցաւ փոլիէթի քարափը «Լևսաժըրի Մարիթիմ» ընկերութեան Manche շոգենաւը, որ այսօր երեկոյեան ժամ 4-ին կը մեկնի այստեղէն և կ. Պոլիս ու մի քանի նաւահանգիստներ հանդիպելով կերթայ Պաթում ուրկէ շոգեկառքով պիտի փոխադրեն Սանասարեանի մարմինը Թիֆլիս ուր և պիտի կատարուի թաղումը։

Փարիզէն 2 պսակ բերուած էին դագաղին Հետ. մէկը՝ Հիանալի գեղեցիկ ծաղիկներով մի մեծ պսակ, Փարիզի Հայ

ԱՓԵՐԱՆՈՑ ՍԱՆԱՍԱՐԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԻ Ի ՍԲՏՈՂՈՐ ԿԱՐՆՈՑ

գաղթականութեան կողմէն ղրկուած է և միւսն ալ Փարիզի «Հայ Ուսանողական Միութեան» կողմէն։ Ի՛նտեղ ալ Մարսէյլի Հայ գաղթականութիւնը՝ որ Սանասարեանի մարմինն երէկ շոգեկառքէն շոգենաւ փոխադրուած ժամանակ կառքերով հետևեցաւ անոր մինչև ծովափը, մի շքեղ պսակ յանձնեց, որի վրայ դրոշմուած է La Colonie Arménienne de Marseille à Sanassarian Bienfaiteur National։ Պր. Յարութիւն Ջաքըրեան Կիլիկեցի (Զէյթունցի), որ այս օրեր ասկէ կանցնէր առևտրական գործով, իր կողմէ ևս մի պսակ յանձնեց Թիֆլիզ տարուելու համար։

Սանասարեանի մարմնին փոխադրութեանը կը հսկէ Թիֆլիզեցի Պր. Գէորգ Գրիգորեանց, որ Պր. Սանասարեանի ճանապարհորդութեան միջոցին մինչև մահը նորա մօտ կը գտնուէր։

***

ՆԱՄԱԿ Կ. ՊՕԼՍԻՅ

—

Քիչ մահեր պատահած են, որ այնչափ տխուր և այնչափ խորին տպաւորութիւն յառաջ բերած լինին Կ. Պոլսոյ մէջ, ինչպէս Սանասարեանի մահն: Սոյն յաւալի վախճանմամբ կարծես ամենայն սիրտ անփոխարինելի կորուստ մը կունենար. ժողովրդեան բոլոր խաւերու մէջ խոսակցութեան միակ առարկան էր Սանասարեան և ամեն ոք սաստիկ զգածուած կը ցաւէր խորապէս: Եւ հետևեալ օր պատրիարքն իբր թարգման ժողովրդային անսահման վշտակրութեան հետևալ շրջաբերականը ղրկեց մայրաքաղաքի բոլոր եկեղեցիներին. «Ազգային մեծանուն բարերար ազա Մկրտիչ Սանասարեան, որ իւր առաքինութեամբ և քրիստոնէական ձիրքերովն և մանաւանդ ազգին համար հիմնարկած հռչակաւոր վարժարանաւն բոլոր հայոց ազգի երախտագիտութեան արժանացած է՝ յետ կարճատև հիւանդութեան առ Աստուած փոխեցաւ ի Փարիզ ի հասակի 72 ամաց:

«Բարերարիս յիշատակն օրհնելու և նորա յերկինս հրաւիրեալ հոգւոյն հանգիստ յաւիտենից մաղթելու համար, այսու շրջաբերականաւ կը հրամայեմք Ձեզ՝ որ յառաջիկայ կիրակէ յունիս 3 ի ս. եկեղեցւոյդ հանգուցելոյն մեծագործութիւններն և բարեմասնութիւնները բացատրելով բարեպաշտ ժողովրդեան հանդիսապէս կատարեք զպաշտօն հանգստեան:

«Տէր Յիսուս Քրիստոս լուսաւորեսցէ զոգի հոգւոյ հանգուցեալ ազա Մկրտիչ Սանասարեանի և բազմացուսցէ յազգի մերում դհետևողս առաքինի, ողորմած և մեծագործ հանգուցելոյն, ամէն»:

Կիրակի օր Կ. Պոլսոյ բոլոր եկեղեցիներն լի էին խուռն բազմութեամբ. իւրաքանչիւր քարոզիչ եպիսկոպոս կամ վարդապետ շատ կենդանի և շատ սրտայոյզ ներկայացուցին Սանասարեանի գործունէութիւնն իբր մարդ, որ գիտցած է իւր ընկերային ծառայութիւններովն ապրած և կ'ապրի մեր սրտի և մեր հոգւոյ մէջ. այս տեսակէտով մանաւորապէս շատ ընտիր խօսեցաւ Խրիմեան Հայրիկ և Մելքիսեդէկ Ս. Մուրատեան:

Սանասարեանի մահուան լուրն որչափ և տխրալի էր հանրութեան սակայն ամենէ աւելի տխուր ներգործութիւն ունեցաւ Էրզրումի մէջ. Մայիս 25-ին երբ քաղաքական ժողովն ի նիստ գումարուած էր նախագահութեամբ առաջնորդին, պ. Եզեանի կողմէ Սանասարեան վարժարանի տեսչութեան ուղղեալ հեռագիրը մը կը դուժէր մեծանուն բարերարի մահն. ժողովականից վրայ վիշտ յառաջ կը բերէ սա անակնկալ և դառն մահն. Առաջնորդն տխրութեամբ կը բացատրէ այդ կորուստի մեծութիւնն և «Չոգւոց» կարդալէ յետոյ կը փակէ նիստն ի նշան սգոյ: Ապա խորհրդոլին կ'երթան Սանասարեան վարժարանն, ուր աղեկտուր տեսարան մը պարզուած էր. տեսչութիւնն, ուսուցիչներն և նա մանաւանդ աշակերտներն դառնապէս կուլային իրանց բարերար Հօր մահուան համար... ազգային բոլոր վարժարանները փակուեցան ի նշան սգոյ. կիրակի օր էրզրումի քաղաքի և գիւղերու ամեն եկեղեցիներու մէջ Հոգեհանգստի տխուր արարողութիւններ կատարուեցան:

Առաջնորդ Իւթիւճեան վարդապետ ի դիմաց վիճակի բոլոր ժողովականաց և ժողովրդեան՝ յաւակցական հեռագիր ուղղեց պ. Եզեանի Պետերբուրգ մխիթարութիւնին մաղթելով և թախանձագին խնդրելով որ հանգուցեալ բարերարի մարմինը կարելին փոխադրուի, Սանասարեան վարժարանի մօտ ամփոփուելու:

ՎԱՂԻՆԱԿ

***

ՄԵԾ ԲԱՐԵՐԱՐ ՄԿՐՏԻՉ Ս. ՍԱՆԱՍԱՐԵԱՆԻ ՅԻՇԱՏԱԿՆ Ի ՍԱՆԱՍԱՐԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆ ԵՒ Ի ԿԱՐԻՆ:

(1818—1890)

Մայիսի 25-ը կարնոյ գարնանային բնութեան այն դեղեցիկ օրերէն մին էր, որոց տպաւորութիւնը շատ խոր է: Հազիւ ազատուած ձմեռնային կապանքներէն, հազիւ ձմեռուան յաջորդող գարնանային մըրկալից հողմերն ու փոթորիկները դադարած, երկնքի երեսէն սև ամպերը ցրուած հազիւ տեսանք արև, այլ արև մի, որոյ ճառագայթները տաք են, կը զգացնեն թէ գարուն է վերջապէս, անհետացան սպառնացող բուքն ու փոթորիկը, այսուհետև պիտի վայելենք այս աւուր նման անամպ երկինք, շող արև, ծաղկավառ դաշտեր, անուշ օդ. մեզ ևս պիտի ծաղկին ծաղիկները, մեր պարտիզի վարդերն ևս պիտի բացուին, գարունը պիտի ժպտայ գեղեցիկ, թախիծն ու տրտմութիւնը պիտի անհետանան տերևաշարժ զեփիւռի հետ, կեանց յոյսերով լի մենք ևս պիտի գոչենք.

«Եկաւ ցանկալի մեր օրն ըսպասած,
Եկաւ գարունը գեղեցիկ, սիրուն,
Ամպերը վերէն վաղուց անհետած
Ծաղկալի դէմքով կը ժպտայ գարուն».—

Սակայն մի գուժաբեր հեռագիր բնութեան այդ ծիծաղը թառամեցուց մեր շրթներու վրայ: Օրն ուրբաթ էր, առաւօտեան ժամ 11, չորրորդ դասը տուած՝ մինչ դասի ձայնը դուրս կը կանչէր դեռ վայելելու այդ բնութիւնը, շնչելու այն օդը, որ կարնոյ յատուկ է յազիսի օրերում, մի լուր մոռացնել տուաւ մեզ ամէն ինչ: Յանդէպս կը շրջինք այսուայն կողմ, դեղեցիկ պարտիզէն ներս և դուրս, այլ յանկարծ հեկեկանքի ձայներ կը լսուին, ականջ կը դնենք, պարտիզէն կուգան նոքա. կ'ինչնենք կրկին պարտէզը, Տեսչութիւնն է արտասուողը. «Ինչ կայ, ինչ է եղել, ինչո՞ւ այս արտասուքն ու հեկեկանքը». չորս կողմէն հարցեր, այլ պատասխան և ոչ ուստեք, հեղձամղձուկ կուլան նոքա. մեզ կուտան հեռագիրը մի, հեռագիրը կը դուժէ «Սանասարեանը վախճանեցաւ ի Փարիզ, թող օգնէ Ձեզ Աստուած մխիթարութիւն գտնելու Ձեր գործերու մէջ ի բարեբաստութիւն նորանով հիմնուած հաստատութեան»: Մի սուր էր այդ հեռագիրը, որ փեռեկեց մեր սրտերը: Լուրն խոլոյն տարածուեցաւ աշակերտաց մէջ, դադրեցաւ մանկական աղմուկը. տիրեց զերեզմանական մի լռութիւն, որը մերթ ընդ մերթ կ'ընդհատուէր լացի ձայներով: Սուգը պատեց ամէն սրտերուն:

Հեռագիրն ուղարկուեցաւ քաղաքիս առաջնորդ Գեր. Իւթիւճեան Հօրը, նա ևս ժողովի նստած՝ բերկրառիթ լրոյ մի հեռագիր կը կարծէր ստանայ, այլ երբ իմացաւ թէ ազգային մի մեծ կորստեան գոյժը կը բերէր նա իրեն, խոլոյն փակեց ժողովը և վարչական մարմնոյ հետ թևաթափիկ, սգագգեաց ու գլխիկոր դիմեց, եկաւ սգոյ տունը, Սանասարեան վարժարանը՝ մխիթարութեան համար: Լուրն անմիջապէս քաղաքը տարածուեցաւ, ամէն ոք փութաց արտասուալից աչքերով դալ և գէթ մի կաթիլ արտասուք թափել այն տան մէջ, որը կը կրէ այդ մեծ մարդու անունը: Սէն ու սուգը ամենուրեք էր, տխրութիւնն ազգային էր, եկեղեցական էր, որովհետև այդ մեծ հոգին անհատի չէր պատկաներ, այլ իւր անձնական ազգին, նա իւր սուրբ եկեղեցւոյ ամենահարազատ որդիներէն էր իւր հաստատքովը, յուսովն ու սիրովը: Խուռներամ կը դիմեն՝ի վարժարան, բաց են նորա դռներն այսօր, ամէնքը կը դիմեն հարուստն ու աղքատը, արհեստաւորն ու վաճառականը, ուսուցիչն ու աշակերտը, խաչկապած ցաւակցութիւն կուզեն յայտնել, այլ ինչ ասեն, ինչ բառերով

այդ մեծ կորստեան համար արտասուեն իրանց ամենամեծ վիշտը. մրմնջել կուգեն մի բան, այլ հեղձամղձուկ կը լինին. հառաչանքը կը խեղդէ նոցա հոգին. կանգնած կը մնան. նստել էլ չեն կարող: Ժողովուրդն երբ գայ, որքան կը սիրէ:

Ժամերն այսպէս կ'անցնէին արտասուալից. երեկոյեան ժամը 4-ն է: Պալրոցի գանգը կը հնչէ. աշակերտները դահլիճ կը ժողովուին: Տիճուր տեսարան, նոցա սրտերու վրայ ազդ տաժանակիր մի բեռն կայ ծանրացած, վայրահակ տրտում կը նային, ամենքն էլ կը զգան թէ մեծ բան կորուսել են, կը որոնեն, այլ չեն գտներ. կեցած են, կը սպասեն: Եւ ահա գեր. Առաջնորդը Տեսչութեանը կ'առաջնորդէ դէպի այդ դահլիճը, սեամէն ներս կը մտնեն. արտասուաց ձայնը կը հասնի ամպերուն:

Երախտագէտ սրտերէն թռած ձայնը, աչքերէն թափած արտասուքը շատ մորմոքեցուցիչ են: Հայր սուրբն իրրև Հոգևոր Հայր այդ սրտաճմլիկ տեսարանի մէջ կուզէ չը խռովիլ սրտով, որպէս զի մխիթարութեան երկնային բանը բարբառէ անմխիթար սրտերուն, այլ Հարիւր երեսուներէն աւելի լացող մանուկներու ձայնի առաջ ինչ սիրտ կը դիմանայ, և այդ Հայր սուրբն էլ զգացուած մի և նոյն դառն վշտով' կուլայ, շրթները չեն շարժիր, հազիւ կ'արտասանէ այս բառերը. «Սիրեցեա՛լ որդիներս, Հարերարը մեռաւ, ի մբխիթարութիւն՝ եկէ՛ք ձեր Տեսչաց ձեռքն Համբուրել». և վազակեցաւ 'ի լաց, արտասուաց ձայնն առաւել բարձրացաւ և կը յուզէր այդ ազդ գահլճի քարերն ու վայտերը: Այդ տխուր տեսարանի մէջ խօսքեր կը լսուին. որոնք առաւել կը խոցեն. «Անգրանիկներէն է, այլ չը տեսաւ», «Ո՞ր է մեր Հայրը, ինչո՞ւ որբ Թողուց զմեզ»: Արևը չի Հանգուրժեր, 'ի մայր կը խոնարհի սքողուած ամպերով. խաւարը կը տիրէ Համատարած, չարագուշակ բուի ձայնը կը գոչէ նոյն բօթը, դասարաններըը կը ցրուին աշակերտները, այլ չի դադրեր այն սուգն ու Հեկեկանքը: Եւ ինչո՞ւ չի լռեր այդ մատաղ սրտերու ձայնը, բայց մ'իթէ լռել կարող են: Պոցանէ շատերն անձամբ տեսել ու վայելել են Հայրական այն սուրբ սէրը, զոր Հարերարը շռայլել գիտէր Հայրաբար, ճանաչել են այն սրտի մեծութիւնը, զոր երկինք ամենուն չի շնորհեր, գիտէին թէ նա այն Հարերար ձեռքն է, որ իրանց պիտի առաջնորդէ կենաց նեղ շաւիղներուն. յուսոյ այն ճրագն է, որ կենաց մըրկածուփ յորձանքներու մէջ' փրկութեան նաւահանգիստը պիտի ցոյց տայ իրանց Հեռուէն, և իրանք որ՛տեսել են անձամբ այդ բարի ծերուհոու աչքերէն իրանց Համար թափած յորդ արտասուքը, այսօր Հեռուէն նորա դագաղի վրայ լինչպէս չը լան և չ'արտասուեն, զրկուած նորա աջոյն որդիական վերջին Համբոյրը դրոշմելէն: Ամենուրեք Հարերարի անունը կը Հնչէ, մինը կը Հարցնէ. «Այսուհետև որո՞ւ Համար աղօթենք.

Եւ Հարերարին
Պահապան Հրեշտակ,
Հոկէ անմեկին.
Ամպոտ երկնից տակ»:

Միւսը, «Ինչո՞ւ այս անմխիթար վիճակին վիճակուեցանք», երրորդը, «Պիտի արժանանա՞նք արդեօք նորա գերեզմանը մեր մէջն ունենալու». կը լսես, բայց չը գիտես լինչ պատասխանես. կ'անցնիս արտասուալից աչքերով, որ այդպիսի Հարցեր սիրտդ չը յուզեն:

Շաբաթ օրն ևս այսպէս տխուր անցաւ, նոյն ողբն ու լաց ամենուրեք, նոյն ցաւակցական այցելութիւնները յաճախ:

Երկու կիւրակէն, Հոգեհանգստի կատարման առաջին օրը. եկեղեցի գնացինք, ատեանը գրուած կար սև մի գագաղ, շուրջը մոմեր շարուած. մենք ևս շարուեցանք այդ գագաղի շուրջը աչքերնիս ի նա յառած. մտածութեանց բուռն յորձանքնեըն խաղալիք՝ կը վարանէինք Հաւատալ թէ այդ մեծ բարերարի Հոգեհանգիստն է որ կը կատարուի, սակայն իրողութիւն էր դա: Գեր. առաջնորդի Հանգիսաւոր պատարագն յետոյ սկսուեցաւ Հանգիսաւոր Հոգեհանգիստը, որոյ ներկայ էին եւրոպացի վեմ. հիւպատոսները իրենց պարագաներովը միասին: 1. Ջօրավար Պենետ, հիւպատոս Թուսոյ իր քարտուղար Կարտամիշեվի, տիկին Կարտամիշեվի, Թարգման պ. Ե. Հագարապետեանի և տիկին Հագարապետեանի Հետ. 2. Կիֆֆորտ Լոյտ հիւպատոս Անգլիացւոց տիկին Լոյտի Հետ. 3. Վիգուրէր՝ հիւպատոս Գաղղիացւոց իր որդւոց և դստեր Հետ. 4. Լավինի, հիւպատոս Իտալացւոց և 5 Ալինագի խան, հիւպատոս պարսից. դոցա կը միանային ամերիկացի միսիոնարք Զեմբերս և Ռիչարտսն և բժիշկ Լանցոնի՝ իտալացի: Հոգեհանգիստն սկսած ժամանակ դագաղի վրայ Թափուեցան պսակները և վունջերը, նուիրուած Բարերարի յիշատակին: Առաջին պսակը դրաւ իր երախտագէտ Վարժարանը այսպիսի վերտառութեամբ, «Բարերար Մ. Ս. Սանասարեանի յիշատակին՝ իր երախտագէտ Վարժարանը». այնուհետև իրարու ետևէն դրուեցան Կարնոյ դաւառի Երեսփոխանութեան, Վարչութեան, Թաղական խորհրդոց, ազգային ուսուցիչներու, ուսումնական խորհրդոյ, Կարնոյ դիւղացիներու, իսկ առանձին նշանաւոր գերդաստանները էն, Բաշլոլեան գերդաստանի (Թուով չորս Հատ), Բաստրմաճեան եղբարց, Փոլանճեան և Վարդանեան, Չագարապետեան և Պալասանեան գերդաստանները ու տիկներ ու վինջերը: Տխրանուագ երգերու ձայները սրտեր կ'արիւնեն, բարձրայարկ եկեղեցւոյ կամարները կը թնդան լացի ձայներէն, Ֆեր. Առաջնորդը կարդաց մի սրտաճմլիկ պամբանական, նկարագրեց մեծ Բարերարի կեանքն և գործունէութիւնը իրրև անՀատական մարդ, իրրև ազգային բարեգործ, իրրև եկեղեցւոյ Հարազատ և ճշմարիտ որդի: Տեսանք նորա մէջ մարմնացած վսեմ առաքինութիւններ, սէր դէպի ազգն ու եկեղեցին, յոյս ու Հաւատք դէպի ապագայ, ճանաչեցինք գնա իրրև ճշմարիտ Հայ-քրիստոնեայ, միշտ նախանձախնդիր իւր եկեղեցւոյ վրաւաց, իրրև ճշմարիտ Հայրենասէր նախանձող Հայրենիքի մեծութեան և ճշմարիտ յառաջդիմութեան, այսուհետ նա դպրոցներ կը կանգնէ, լոյս կը սիրէ, այնտեղ դպրոցներուն կ'օգնէ, կը խրախուսէ այդ ասպարէզի մէջ նահատակ Հոգիները, «Ի զուր չէ ձեր ջանքը, կը գոռայ, կը գոչէ ամենուրեք, կենսատու, վրկիչ է նա». գարմացանք նորա մեծ մարդասիրութեան վրայ, որով կը կարեկցի ամէնուն, ինքը մի անՀատ, ունի մի սիրտ. այլ այդ սրտի մէջ մեծութիւն կայ բանդակուած: «Ո՞րը Թուեմ, կը գոչէ. մի անձն որ բարեգործութեան Համար է ծնել, մոռացած ինքզինքը կ'աշխատի ուրիշի Համար, ինքը կը մեռնի, որ ուրիշը յարութիւն առնէ»: Այլ պարձեալ կը տկարանայ, խօսքեր կը պակսին նորան, ուստի լինք կը լռէ, Հրաւէր կը կարդայ նորա մեծագործութեանց, որ նոքա խօսեն. իսկ նոքա միշտ և միշտ կը խօսին ամէն Հայ սրտերու մէջ: Ս. Հայրը կը խօսի. Վարժարանն ու ժողովուրդը կուլան, որքան սուրբ է այդ արտասուքը:

Կը վերջանայ Հոգեհանգիստը, մեռելեան Թափօրը կը սկսի: Մեծ աշակերտներն էն պսակներն ու վինջերը Թուով 18 Հատ ձեռքերը բռնած Թափօրին կը կարապետեն, նոցա կը Հետևեն աշակերտները, աշակերտաց՝ ուսուցչական մարմինը իսկ երկու կողմէն խուռն բազմութիւն: Կը Հասնինք 'ի վարժարան. պսակներն ու վինջերը կը պետեղուին Բարերարի սեաւաքօղ, իզմանկար պատկերի տակն ու շուրջը սր-

գոյ սենեկի մէջ*, գալպասի մօտ դրուած է սեւապատ սեղան մի. վրան թանաք ու գրիչ և տոմար մի, ուր կը ստորագրեն ցաւակցական այցելութիւնն տուող ազգայինները իրանց անուննները ամէն գաւառակարգէ։

Նոյն օրը, երեկոյեան ժամ 3½-ին գեղեցիկ մտածութեամբ Յոյներն՝ իբրև քրիստոնեայ եղբայրներ կատարեցին քրիստոնէական, անմոռանալի պարտք մի՝ Բարերարի համար Հոգեհանգիստ մի։ Նամակով առաջուց յայտնեցին մեզ իրանց դիտաւորութիւնը նշանակուած ժամանակին ներկայ լինելու Հոգեհանգստեան տխուր հանդիսին։ Ելաւ ժամանակը Գեր. Առաջնորդ Ս. Հօր առաջնորդութեամբ Սանասարեան Վարժարանը խուռն բազմութեան հետ ներկայ էր այդ արարողութեան։ Կատարեցին նոքա այդ ս. պարտքը, շնորհակալութեան զգացումներով բեռնաւորուած Գեր. Իւթիւջեանը պահպանիչէ յետոյ յայտնեց իւր խորին շնորհակալութիւնը Յոյն եղբայրներուն այդ քրիստոնէական սուրբ զգացման համար, որն անմոռանալի պիտի լինի մեզ։ Տխուր մեկնեցանք։

Զաբաթէն ուելի է ազով պատուած են մեր սրտերը, մեր տունը սև, մեր սրտերը սև, մեր երկինքը սև երբեմն, ցաւակցական այցելութիւնները կը շարունակուին, մատենի մէջ այցելուներու անուանց թիւը կը ստուարանայ։

Այս տխուր պարագաներու մէջ չէ կարելի մոռանալ մի դէպք, որը եզական է իւր տեսակի մէջ։ Պոլրոցի կողմէն գըլուեցաւ ծաղկեայ պսակ մի, այլ երախտագիտական բուռն տենչը դարանով չը գտնացաւ։ Այն աշակերտները, որոնք կ'եբաղէին գալ տարի Բարերարի ձեռքերն համբուրելով և նորանէ Հայրական ս. օրհնութիւնն ստանալով՝ այնպէս թողուլ Սանասարեան վարժարանի սեամը, որը զիրենք ծնաւ կատարեալ մտաւորապէս և բարոյապէս, այսօր ցաւ 'ի սիրտ տեսնելով իրանց դժբաղդութիւնը, խորհեցաւ մի յիշատակ թողուլ նորա շերմի վրայ 'ի նշան իրանց մեծ երախտագիտութեան։ Ը. դասարանը ոսկեայ պսակի մի խորհուրդ յղացաւ և հանգանակութիւն բացուեցաւ։ Երբ երախտագիտական զգացումը կը խօսի, նորա հանդէպ ամեն ինչ կը լռէ։ Հանգանակութեան մասնակցեցան և մնացեալ Գ. Ե. Ջ. և Ի. դասարանները և ժողովուեցաւ հազար լուբլիէն աւելի մի պատկառելի գումար, որոյ գործադրութեան վրայ պիտի մտածուի շուտով, ուսուցչաց մասնակցութենէն յետոյ։ Մի դէպք արդարև որը մատնանիշ կանէ նաև այդ մեծ հաստատութեան ոգւոյ և ուղղութեան վրայ, և ո՞վ է որ չի բերկրեր մի այդպիսի բերկրաւիթ երևոյթով։ Մոռանա՞մ արդեօք շատ մի ազնիւ ծնողաց այն խօսքերը, որոնք կը հնչէին այդ նպատակի համար դրամ ուզող աշակերտաց ականջին. «Որդեա՛ս, Բարերարի համար այդ շատ քիչ է»։

Մայիս 27, կիրակի օրէն սկսած Բարերարի հոգւոյ հանգստեան համար ամեն օր սուրբ պատարագ կը մատուցանուէր և հոգեհանգիստ կը կատարուէր, որուն ներկայ էր միշտ իւր դառն սգով համակուած Վարժարանը։ Վերջին հոգեհանգստեան պատարագը մատուցուեցաւ շաբաթ օրը, յունիս 2-ին։ Լսեցինք հոգեհանգստի վերջին շարականը, կարդացին վերջին աւետարանը, որ կենաց ընթացքին հրաժեշտ տուող հոգւոյ անմահութեան յոյս կ'արծարծէր, կերանք հոգւոյ հացը, որ տրուեցաւ այդ օր քահանայական և ուսուցչական դասերուն, Վարչութեան, Ուսումնականն, Թաղական և այլն խորհրդոց, լսեցինք հոգւոյ հանգստեան ճառեր ու մաղթանքներ, որոնք մահուամբ անմահութիւն կը քարոզէին այդ մեծ մարդու համար, կը խոստովանէին անուրանալի իրողութիւն մի թէ Սանասարեան վարժարանէն այս ոգոյ օրերում երախտագիտութեան դաս առանք։ «Տեսել էինք ուրիշ տեղեր հանգուցեալի մը համար արտասուք, այլ թուով շա՛տ նուազ, իսկ մի և նոյն յարկի մէջ, տարբեր քաղաքներու և գիւղերու գաւակներ, մի և նոյն անձի համար 200-էն աւելի լայող աչքեր Սանասարեան Վարժարանի մէջ տեսանք»։ Ո՛չ ոք կ'ուրանայ այդպիսի մի անուրանալի ճշմարտութիւն։ Մենք և նոցա հետ յուզուեցանք, հանեցինք հոգեհանգստեան վերջին խաչը, արձակեցինք վերջին հառաչը, թափեցինք վերջին արտասուքը, այլ բարութեան ու բարեգործի համար կա՛յ վերջին հառաչ ու արտասուք։ Արևն ելաւ, արևը մայր մտաւ, այլ մեր Հոգիներէն դեռ չը վերացաւ ոգոյ սև քողը, մեր սերտելէն չանցա՛ն և չանցա՛ն սև հառաչները, չը մոռացանք Հոգեհանգստեան վերջին աւուր՝ Լուսաւորչի՝ խոր Վիրապէն ելնելու տօնի հետ պատահական զուգադիպութիւնը։...

ԿՈՐԻԻՆ ՄԿՐՏՉԵԱՆ

1890 թ., յունիս 5.

* Որոյ լուսանկար պատկերը ներփակեալ կը ուղարկեմ պատուական «Արձագանք»-ի խմբագրութեանդ, բարեհաճելու գետեղել գնա Զաբաթաթերթիդ մէջ։

ԴԱՐԵՐԻՆ ՎԵՐՋ Մ. Ս. ՍԱՆԱՍԱՐԵԱՆԻ ԱՐՁԱՆԻՆ ԱՒՈՒՂ

ՀԱՅ ՄԱՅՐՆ ԱՒ ՈՐԴԻՆ

«Ի գուճ, ի գուճ արձանիս դէմ,
Համբոյր մի տուր մարմար քարին,
Յող մ'արտասուաց աչքէդ նսեմ
Թափէ այս սուրբ պատուանդանին։

Անցա՛ն դարեր, դեռ անկործան
Սա կը հսկէ կանգնած յոյս վայր,
Կ'անցնին դարեր, այլ այս արձան
Պիտի կանգուն մընայ յամայր։

Այս ծագկալից դաշտերը տե՛ս,
Որդեա՛կ սիրուն տե՛ս այս երկիր.
Ակատ հոսող այս գետերէս
Չե՞ս այլ լսել ձայն վշտակիր...։

Դարեր եկան, դարեր անցան
Մեր փըշալից հին դաշտերուն
Հուր բորբոքեց Մրկրտչի ձայն
Այրեց արմատն այն փըշերուն։

Ու ցրուեցան մըթին ամպեր.
Ելաւ արևն այս աշխարհին.
Կենաց գարնան պայծառ շողեր
Մութ սրտերը լոյս շրջեցին։

Արձանագիր այն անուններ,
Այս շիլիմներ՝ մեծ քարերէն,
Սուրբ այն գործին են վկաներ
Մընացած մեզ հին դարերէն։

Անցա՛ն դարեր, բայց ամրակուռ
Նոքա կանգնած աստ անկործան
Կը դիտեն խոր կը ժպտան լուռ
Խաչի դրօշին հոդմածածան։

Կ'անցնին, կ'երթան դեռ շա՛տ դարեր,
Մենք էլ կ'անցնինք աստ ցերուցան,
Կը կործանուին այս յաղթ սարեր
Այլ կը մընայ միշտ այս արձան։

Ի գուճ, որդեա՛կ արձանիս դէմ,
Համբոյր մի տուր սուրբ այս քարին,
Թո՛ղ այս աշխարհն անցնի դժխեմ
Այլ յաւիտեան մընայ բարին»։

(Կ. ՄԿՐՏՉԵԱՆ)

1890, յունիս 2։

ՄԱՏԵՆԱԽՕՍՈՒԹԻՒՆ

ՀԱՆԴԷՍ

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՊԱՏՄԱԿԱՆ

Երեւան էջեր

Մոսկուա, պարան Մ. Բարխուդարեանի, 1890 թ.։

Այս օրերս լոյս տեսաւ Մկրտիչ Բարխուդարեանի նախաձեռնութեամբ սկսուած հրատարակութեան երրորդ հատորը։ Հայ ընթերցողները բաւականաչափ ծանօթ են այս հրատարակութեան նախկին հատորներին։ Վերջին երրորդ հատորն էլ առաջիններուն պէս կազմուած է գրականական-

պատմական յօդուածներից: Ինչպէս երեւում է հրատարակիչը մտադրուել է մատակարարել հայ հասարակութեանը ընտիր գեղարուեստական և ընդհանուր զարգացուցիչ յօդուածներ և այս դիտաւորութիւնը կատարում է նա բաւական յաջող կերպով: Հեռու մեր մամուլի առօրեայ փոխադարձ խծբծանքներից հրատարակիչը կարող է լաւ ծառայութիւն մատուցանել մեր գրականութեան և հասարակական զարգացման գործին, եթէ շարունակելով իւր գործը մի փոքր խիստ կերպով վերաբերուի լրագրմանական: Բանաստեղծութիւններից աչքի են ընկնում Յովհաննէս Յովհաննիսեանի և Մանուէլեանի երգերը, յետոյ կան և Մ. Նալբանդեանի երեխայական ոտանաւորները և մի քանի հատ թարգմանութիւններ, որոյ մասին նոյնպէս կ'ասենք մի քանի խօսք:

«Հանդէսի» առաջին երեսը բացվում է Պռօշեանցի «Ադամայ մուրթը» վերնագրով աւանդութեամբ, որ շատ տարածուած է Արարատեան աշխարհում:

Այս փոքրիկ պատկերում հեղինակը նրբութեամբ է ընթերցողին ներկայացնում Ադամին, որ Եդեմի դրախտից դուրս գալով՝ ամենից առաջ ուզում է իմանալ, թէ ինչ է մահը, որ Աստուած սպառնացել էր նրան, եթէ նա ուտէ արգելեալ պտուղը: Ադամը տեսնում է, որ իր շուրջը ամէն ինչ կենդանի է, ամէն ինչ ապրում է, ամէն ինչ ուրախ է, ամէն ինչ ծաղկում է, ամէն ինչ ուրախութեան երգ է երգում, ամէն ինչ ցնծում է, ամէն ինչ սիրում է, ամէն ինչ ապրում է, ամէն ինչ ապրում է, ամէն ինչ ապ

այս առաջարկութեան վրայ տատանվում է անհամբեր՝ Եւան դարձեալ նորա դժբաղտութեան պատճառ է դառնում, խնդրելով և աղաչելով, որ Ադամը ստորագրէ առաջարկած պայմանը: Ձր կարողանալով դիմանալ՝ կնոջ փաղաքշանքներին՝ մարդը անձնատուր է լինում և իւր եղունդով փորում է քարի վրայ պայմանը: Սատանան յափշտակելով քարը շպրտում է Յորդանանի անդունդը, որպէս զի մարդկային ցեղը չը գտնէ իւր մշտական գերութեան պայմանագիրը:

Այդ միջոցին գիշերը հետևելով իւր սովորական ընթացքին՝ տեղի է տալիս առաւօտեան ճառագայթներին: Խարուած և յուսահատ Ադամը շուարած հասկանում է իւր երկրորդ սխալը: Ատուաձ, որ երբէք ըստ ժողովրդական հասկացողութեան չէ թողնում իւր ստեղծածին՝ խղճում է դարձեալ նորան և յուսադրում.

Ի՛ զա՜ուէը է֊ը գ֊ուշպ֊ուրէ ՝ներբ՜ուռով է֊ջ՜ը֊ջէ ֊ո ՝անհ֊ուաթ֊ուռ֊ը՜ուռ՝ ֊ն֊ուայ֊գ֊էրը, ՝ա է֊թր֊է֊ ֊էեղ ՝ա ֊ո ֊ներ֊՜ուրը:

Ադամը զայրացած իւր արած սխալի վրայ՝ ցանկանում է, որ ի չիշատակ իւր այս թեթևամտութեան՝ արշալուսից յառաջ թանձրացած սպասուելի կարճատև խաւարը կոչուի «Ադամը մութը»:

Պռօշեանցը իւր պատկերի մէջ հաւատարիմ է մնացել ժողովրդական հայեացքներին, վերագրելով Ադամի երկրորդ սխալը նոյնպէս իւր կնոջը:

Ձենք կարող չ'դիտել, որ Պռօշեանցը երբեմն-երբեմն անհամապատասխան ոճեր և խօսակցութիւններ է դրել Ադամի և Եւայի բերանը: Երբոր Ադամը վճռում է տալ սատանային պահանջած ստորագրութիւնը, նորան ասում է Եւան.

—Ինչ գալու է, թող գայ, ջուրն ընկնողը անձրևից չի վախիլ, այ մարդ...

Դրախտից դուրս բոլորովին չապրած մարդը՝ գործ է ածում այնպիսի դարձուածներ, որոնք մարդկային երկարատև թշուառութեանց արգասիք են:

Երկրորդ ինքնուրոյն պատկերը կրում է «Պաշան» խորագիրը, որ պատկանում է Սուլթանին: Ընչայտ ստորագրութիւնը սակայն չ'պիտի շփոթեցնի ընթերցողին, Հանդէսի մէջ նա կարդացած կ'լինի նոյն ոճով և նոյն տեսակի այս հեղինակի շատ գրուածներ, բայց այլ ստորագրութեամբ: Սակայն դառնանք վէպիկին: Նոր-Նախիջևան քաղաքում ապրում է Քարփ Սիմէօնիչը իւր միակ աղջկայ Պաշայի և իւր կնոջ հետ: Պաշան դարձնում է իւր վրայ բազմաթիւ երիտասարդների ուշադրութիւնը իւր դեղեցկութեամբ, մանաւանդ և իւր հօր հարստութեամբ, որի միակ ժառանգն ինքն է: Ձնայելով քաղաքի անուանի երիտասարդների Պաշայի հետ պսակուելու ցանկութեանը՝ վերջինս սակայն սիրում է խանութպան Արտուշին: Պաշայի առաջ կոտրատուող երիտասարդներից մէկն էլ Իւան Մաթվէյիչն է, որ ձգտում է անպատճառ տիրանալ Քարփ Սիմէօնիչի հարստութեանը, թէև մի քանի անգամ մերժումն է ստացել Պաշայից: Իւան Մաթվէյիչի նպատակների իրագործմանը օգնութեան է գալիս Սիմէօն Իլիչը, որ դիտաւորութիւն ունի Իւան Մաթվէյիչի պսակը գլուխ բերելով շահել երկու դօրեղ բարեկամներ, որոնք իւր ապագայի նպատակներին կարևոր կարող են լինել: Այս նպատակով Սիմէօն Իլիչը խնջոյք է կազմում, հրաւիրում է շատ հիւրեր, իհարկէ Իւան Մաթվէյիչին և Պաշային, որին ամենևերպ աշխատում է հաճոյանալ: Պարի ժամանակ Իւան Մաթվէյիչը անկասկած պարում է Պաշայի հետ, բայց այնքան լիմար է գտնվում, (որպէս վկայում է Սուլթան Հեղինակը), որ դանադան «խաղերով» վիրաւորում է օրիորդին: Վերջինս թողնում է խնջոյքը կիսատ և հիւանդ ձևանալով մօր հետ հեռանում է խնջոյքից: Միւս օրը թէև ըստ տեղական սրբազան սովորութեան ամբողջ քաղաքում խօսում են Սիմէօն Իլիչի տանը պատահած դէպքի մասին, բայց Արտուշը իմանալով հանդերձ այս բանը ոչինչ նշանակութիւն չի տալիս սրան, որովհետև սիրում է Պաշային և վայելում է նորա փոխադարձ համակրութիւնը:

Իւան Մաթվէյիչը սակայն չի յուսահատվում և կարծում է էլի Սիմէօն Իլիչի միջոցաւ համոզել Պաշայի Հօրը: Սիմէօն Իլիչն էլ թէև շատ մեծ յոյս չի ունենում, որ կարողանայ յաջողեցնել, բայց մտածում է ինքն իրան:

—Եթէ կարողացայ գլուխ բերել, խիստ լաւ, իսկ եթէ չը կարողացայ գլուխ բերել, մինչև այդ գործի գլուխ գալ ու չգալ յայտնուիլը իմ բանս էլ կամ կը շինուի կամ կը քանդուի:

Իսկ նորա գործը նրանումն էր կայանում, որ կամենում էր Իվան Մաթվէյիչի և ուրիշների օգնութեամբ Նոր-Նախիջևանի քաղաքագլուխ դառնալ: Թէև Պաշայի հայրը, Քարփ Սիմէօնիչը ցանկութիւն ունէր իւր աղջկանը հարուստ մարդու տալ, բայց նա միւս կողմից գիտէր, որ Պաշան իւր սասկի աղջիկ է և եթէ չը կատարէին նորա ցանկացածը—կը հիւանդանար իսկոյն: Այսպիսով հայրը իմանալով, որ Պաշան Արտուշին սիրում էր—չի կամենում սակայն խիստ միջոցների դիմել, որովհետև միակ աղջկայ սիրտը կոտրել դժուարանում է: Արտուշն էլ էր շարունակում ամեն ամիս այցելել Քարփ Սիմէօնիչի տունը խանութից տարած ապրանքների հաշիւը ստանալու և ի հարկէ ամեն անգամ լուռի խօսում է Պաշայի հետ: Մի անգամ էլ Արտուշը այցելութեան ժամանակ խորհուրդ է տալիս Պաշային հայրէն կարդալ (մեր ժամանակի սիրոյ անպայման ֆակտօրներից գլխաւորը) միւս անգամ համբուրում է: Պաշան աւելի և աւելի ջերմ սիրով է սիրում Արտուշին, ամեն օր ուսումնարան գնալիս, այցելում է Արտուշի խանութը: Սակայն Արտուշի անմեղ համբոյրը աննկատելի չի լինում նախիջևանցու սիրած ուսուցուհուց, որ մի օր դժգոհ լինելով իւր տիրոջ աղջկանից—տարածում է քաղաքում այս լուրը: Քարփ Սիմէօնիչը իւր հաշիւները վերջացնում է Արտուշի հետ: Սիմէօն Իլիչը մտածում է, որ ամենալաւ ժամանակն է համոզելու Քարփ Սիմէօնիչին Պաշային Մաթվէյիչին տալու: Քարփ Սիմէօնիչը կակղում է, բայց աղջիկը միանգամայն յայտնում է, որ Արտուշից ձեռք վերցնողը չի: Մինչ այս Սիմէօն Իլիչը Քարփ Սիմէօնիչի և Իւան Մաթվէյիչի դօրեղ աջակցութեամբ քաղաքագլուխ է դառնում, իսկ Պաշան փախչում է Արտուշի հետ, որ արդէն իւր խառնուածը վազուց վերջացրած է ու դիտէ թէ ինչու համար:

Այսպիսով Սուլթանը ներկայացրել է Նոր-Նախիջևանի մի աղջկայ տիպ, որը ոտնակոխ անելով ընտանեկան և հասարակական արդելաւորութիները՝ գնում է իւր սիրոյ հետևից անդառնալի կերպով: Վերջին տարիների մեր գրականութիւնը հաւատարիմ մնալով իրական կեանքի պատկերին աւելի շատ տուել է իրեև մաքուր սիրոյ ներկայացուցիչներ կանայք քան թէ տղամարդիկ: Որ այսպիսի աղջիկ կարող է լինել՝ այս մի այժմ արդէն նշանաւոր երեւոյթ չէ, այն էլ Նոր-Նախիջևանում: Որքան էլ հետաքրքրական լինի վէպիկի գլխաւոր միտքը և համակրելի նորա գլխաւոր հերոսները—չենք կարող սակայն ուշադրութեան չ'առնել, որ հեղինակը գրում է շատ անմշակ կերպով: Նոյն իսկ Պաշայի և Արտուշի սէրը պարզ չէ թէ ինչի վրայ է հիմնուած: Կարող է պատահել ի հարկէ, որ մի աղջիկ մէկին տեսնի և սիրէ, բայց սիրողը միշտ մի բան ստեղծում է իւր համար սիրելու և այս մի բան հեղինակը պիտի գդալ տայ ընթերցողներին: Վէպիկից յայտնի է, որ Արտուշը համեստ է, գեղեցիկ է, խնջոյք-

նելից վախչում է, իրանից մեծերին յարդանք է մատուցանում և սրանով էլ վերջանում է նորա արժանաւորութիւնների պիպլոմը։ Երկրորդ «Պաշան», ինչպէս և Հայերէն գրուած բազմաթիւ վէպերը, կրում է մի մեծ պակասութիւն—այդ այն է, որ պատմութեան և նկարագրութեան մէջ համաչափութիւն չկայ։

Մեր հեղինակները սովորաբար կամ մի գլուխ պատմում են կամ ընդհակառակը սի գլուխ նկարագրում են։ «Պաշայի» մէջ տիրապետում է այս անգամ պատմութիւնը և այն էլ հեղինակի կողմից, մինչդեռ վէպը պէտք է հետաքրքրական դարձնել չափաւոր խօսակցութիւններով և։

Երրորդ ընդհանուր թերութիւնը նա է «Պաշայի», որ գրելու ձևը հետաքրքրական չի, մինչդեռ վէպի գանագան գլուխները այնպէս պիտի դասաւորուած լինին, որ ընթերցողի ուշադրութիւնը միշտ բևեռած մնայ նիւթի վրայ։ Չը նայելով վերոյիշեալ նկատողութիւններին պ. Սուլթանը կարող է յաջող պատկերներ գրել, եթէ մի փոքր աւելի մտածէ իւր գրուածների ամեն մի տեսարանի վրայ, աշխատէ ապրել և զգալ իւր տիպերի հետ, որոնք նոյն ազդեցութիւնը պիտի գործեն ընթերցողների վրայ։ Սէքի է ընկնում Պաշայի սահուն և հարթ ոճը։ Պիտելու արժանի է, որ այս վէպի մէջ կան Ն. Նախիջևանի կեանքի պատկերների կենդանի նշոյլներ։ Այդ քաղաքի եսական և ունայնասէր կեանքի յիշատակութիւնը մասամբ ցոլանում է վէպիկի մէջ, մանաւանդ այդ տեղի բամբասասիրութիւնը, որ առաջանում է մի կողմից հասարակական կեանքի կատարեալ բացակայութիւնից։

Ահա թէ ինչ է ասում պ. Սուլթանը նոցա մասին։

Նրա ուշ մէ խնջոյքում ուրիշ ոչ մի առարկայի վերայ խօսելու սովորութիւն չունէին, բացի թեթև բամբասանքներից, միմիայն կարտնէ, որ ամենքի ուշադրութիւնը իւր վերայ է դարձնում, լինին հարուստ, աղքատ, որ կարգի մարդու համար ասես. բամբասանքն էլ մի անմեղ զուարճութիւն է, ոչինչ վնասակար հետևանք չունեցող և այն ..

Այժմ դառնանք «Հանդէսի» թարգմանական վէպերին։

Թարգմանական վէպերից աչքի են ընկնում Լազարեվիչի «Առաւօտեան ժամին» սերբական զրոյցը. Մօրիս – Մօնտեգիւի «Կարաբասը» և Տուրգենեվի «Ուրուականները», իսկ միւս մանր պատկերները առանձին ուշադրութեան արժանի բաներ չեն։ Լազարեվիչի վէպի մէջ պատմուած է սերբական ընտանիքի մի փոթորիկ, որ առաջ է գալիս տան գլխի՝ հօր անզուսպ կամայականութիւնից և անպատասխանատու բռնակալութիւնից։ Այստեղ նկարագրուած է թէ ինչպէս տաճկական տիրապետութեան տակ մեծացած բռնակալ ի բնէ բարի և խելօք սերբը կամաց կամաց անձնատուր է լինում թզրաախաղին և վերջը կորցնելով ամեն բան՝ կամենում է ինքնասպանութեամբ վերջ տալ իւր կեանքին, բայց նորան արգելում է նորա կինը, որի խորհուրդներին առաջ Դիմիտրին չէր կամենում լսել, տառապելով, որ ինքն է եղել բոլոր հարստութեան ոչնչատողը և ինքն էլ իրաւունք ունի վատնելու։ Իսկապէս ասած այս վէպի գլխաւոր դաղափարը կայանում է այն թշուառ հետևանքների նկարագրութեան մէջ, որոնք տեղի են ունենում ընտանիքում, եթէ տղամարդը սեպհականելով իրան տան ամբողջ կառավարութիւնը հեռացնում է կնոջը ընտանեկան գործերին մասնակցելուց և աւելորդ է համարում որ և է հանդամանքում նշանակութիւն տալ կնոջ խօսքերին։

Բացի այս վէպի մէջ շատ դեղեցիկ նկարագրուած է սիրող կնոջ սփոփիչ և մեղմացնել բարերար ազդեցութիւնը մարդուս վրայ, որի յուսահատութեան վերջին րոպէին նորա ընկճուած կինը ազատում է իւր անձնուէր սիրով և խրախուսանքով։

Աւելորդ ենք համարում վէպի ընդարձակ բովանդակութիւնը պատմել, բայց չենք կարող մեր ընթերցողներին չը տալ Լազարեվիչի կենդանի վէպից մի քանի բնաորոշ պատկերներ։ Մանաւանդ այս հարկաւոր ենք համարում այն պատճառով, որ այս վէպի մէջ նկարագրուած սերը ընտանիքը իւր գլխաւոր յատկանիշներով և սաղմով շատ նման է հայկական ընտանիքին։ Շատ դեղեցիկ կերպով նկարագրուած է սերբացի մարդու ու կնոջ, հօր և որդկերանց փոխադարձ յարաբերութիւնը և ճնշուած կնոջ անսահման սէրը դէպի ամուսինը։ Վէպի պատմութիւնը անում է սերբի որդին, որը իւր հօր բնաւորութեան մասին հետևեալն է պատմում.

Նորա բնութիւնը,— թէպէտ և նա իմ հայրս է, բայց քանի որ սկսեցի պատմել, պէտք չէ ծածկել,— տարօրինակ էր։ Շափազանց լուրջ ու խստահայեաց, միայն հրամայել գիտէր և եթէ մի բան ասէր, դու էլ իսկոյն կը կատարէիր— Աստուած հեռի տանէր։ Սաստիկ բարկացկոտ էր—ամեն բան էլ ուզում էր իւր ասածին պէս անել, և ոչ ոք չէր իշխում ապացուցանել նորա հակառակը։ Կուռելիս գիտէր միայն ապտակ տալ, բայց այնպէս ապտակ կը տար, որ ուտողի աչքերից կրակ կը թափուէր։ Բարկանալուց նա կրծում էր ներքին պռօշը, որ րում էր աչ կողմի բեխը, վեր էր տանում նորան, յօնքերը կիտում։

—Երբէք նա չէր ծիծաղում, գոնէ ոչ այնպէս, ինչպէս ուրիշներն են ծիծաղում անել»։

Մի փոքր յետոյ որդին պատմում է, որ չէ յիշում հօր կողմից մի որ և է քնքշութեան նշան։

Ահա այս մարդը սկսում է թուղթ խաղալ և երբ կինը իմանալով այս բանը համարձակվում էր ակնարկել նորա վարմունքը—նա մրմրթալով հեռանում էր կամ բարկացած ասում.

—Հարիւր անգամ արդէն ասել եմ քեզ, որ չը համարձակուես գլխիս քարոզ կարդալ և խօսել։—

Երբոր Դիմիտրին սկսում է աւելի և աւելի տարուել և վազ է միշտ պահանջում կնոջից—վերջինս միմիայն անխօս հանում է արկղից տալիս ու աղօթում Աստուծուն, որ նա դարձնէ մարդուն վատ ճանապարհից։ Դիմիտրին սակայն ամեն բան կորցնում է մի գիշեր և ուղղակի գնում է տանից իրան սպանելու, բայց անքուն պարկած ամուսինը նկատում է մարդու պիտաւորութիւնը և յետևից դուրս է գալիս և վերջին րոպէին գոռում է.

—Դիմիտրի, ընկերս, տէրս, այդ ինչ ես անում։

Ձուարուած ամուսինը ամօթից դողդողում է և յայտնում, որ ամեն բան կորցրել է։ Կինը սակայն խրախուսում է նորան, ասելով, որ ինքը և իւր որդիքը կապրեն, եթէ մարդը կենդանի կը լինի։

—Երբ մենք պտկուեցանք, ոչինչ չունէինք, բացի այն վերմակը, մի ամանը, երկու երեք տաշտը, իսկ այժմ, փառք Աստուծոյ, տունը լիքն է։

—Իսկ իմ գլխի ոսկիները. ինչու են հարկաւոր այդ դուկատները։ Վեր առ առևտուրի համար։

Ահա այսպէս ազատում է բռնակալ ամուսնուն այն կինը, որի հետ Դիմիտրին օտարից վատ էր վարվում և հարկաւոր չէր համարում թոյլ տալ նորան միջամտելու իւր գործերին։ Նորա յարաբերութիւնը դէպի կինը այսպէս է պատմում նորա որդին.

—Միշտ մի ուրիշ կերպով էր վարվում մօրս հետ, միշտ սառը, բարկացած, աւելի կարճ, օտարից վատ։ Իսկ նա, խեղճը, բարի է, որպէս հրեշտակ, և միշտ իւր մարդու աչքերին էր նայում։ Չօրս բարկացած ժամանակ, խեղճ մօրս հոգին, ասես, դուրս էր գալիս. բացի դորանից նա իւր արտասուքն էլ պիտի ծածկէր թէ հօրից և թէ մեզանից։ Երբէք հայրս նորա հետ մի տեղ չէր գնում, և մայրս չէր համարձակվում ասել նորան, որ մի տեղ տանէ։ Նա դիմանալ, համբերել չէր կարող, երբ մայրս խառնվում էր նորա վաճառականական գործերի մէջ...

«Հանդէսի» երկրորդ թարգմանական

վէպը Մօնտէգիւի «Կարաբասն է»։ Այս վէպի մէջ պատմած է թէ ինչպէս մի հոգով առողջ գաւառացի սիրում է իւր հոգու բոլոր զօրութեամբ մի քաղաքացի աղնուականի աղջկայ, որը տոհմական ինքնասիրութեամբ կուրացած զոռոզաբար մերժում է արժանաւոր մարդու սէրը, բայց յետոյ զգալով նորա վեհ հոգու ոյժը նեարդային հիւանդութիւն է ստանում և կուրանում։ Գիւղում մեծացած Անտուան Հէկոնտալը ապրելով քաղաքում սիրահարւում է իր տան դիմաց բնակուող աղնուանի տոհմի Եղիսաբէթ Դէ-Քրէ օրիորդին, որ իր մօր հետ միայնակ էր ապրում։ Չը նայելով իւր թէև պատահական, բայց խոր զղացմունքին, Հէկոնտալը չէր համարձակվում որ և է կերպ ծանօթանալ Լիզաբէթի հետ և բաւականանում է պլատոնական սիրով։ Սակայն ճակատագիրը հեղինակի թելադրութեամբ նորան օգնութեան է հասցնում օրիորդի մորաքրոջը, որ մի քանի օրով փարիզ եկած ժամանակ նկատում է պատուհանից Հէկոնտալի օդային սիրոյ ցնցումները և տանջանքները և հասկանալով բանի էութիւնը վճռում է Հէկոնտալին փեսայ դարձնել իւր քրոջը, մանաւանդ որ Լեզաբէթին փեսացու ձևացող փաստաբանը նորան դիւր չի գալիս։ Այսպիսով Հէկոնտալը ծանօթանում է Լիզաբէթի հետ, նրանց ամբողջ ընտանիքին մինչև անգամ մի օր հիւր է տանում իւր կալուածները։ Լիզաբէթի մօրաքոյրը փարիզից գնալիս իւր քրոջը բաւականին տրամադրած է լինում յօգուտ Հէկոնտալիս։ Սակայն Լիզաբէթը ոչ մի կերպ չի համաձայնում առնել Հէկոնտալին և մի օր մինչև անգամ անձնական բացատրութեան ժամանակ ուղղակի յայտնում է Հէկոնտալին, որ նորան գնել չի կարելի ոչ մի կերպ։ Պէտք է դիտել, որ սորանից առաջ Լիզաբէթին փեսացու ձևացող փաստաբանը (մեզանում անպատճառ բժիշկ կը լինէր) իմանալով, որ Լեզաբէթի մայրը մասնաւոր մարդկանց ձեռքում վերջին փողերը կորցրել է,—հեռանում է նոցա տանից։ Լիզաբէթի մերժումը ստանալիս Հէկոնտալը մի որտառուչ խոստովանութիւն է անում նորան և նորա խօսքերը սարսափելի տպաւորութիւն են գործում օրիորդի վրայ։

—Ես երբէք չէի մտածում Ձեզ գնել, ես միայն երազում էի, որ բոլոր կանանցից Ձեզ երջանկացնեմ, Ձեզ պատեմ անհուն և անսահման սիրով։

—Խոստովանվում եմ, դա չափազանց փառասիրական ցնորք էր, որովհետև իմ ձեռներս երկայն են, ոտներս նոյնպէս, ես կեղծ եմ երդում և պարում—առանց հետևելու տակտին։ Ձեզ պէս օրիորդը, ձեր շրջանի և ձեր բնաւորութեան օրիորդը չի կարող թոյլատրել այդպիսի արհաւիրք, որոնցից ակներև է, կախուած է ձեր երկրային երջանկութիւնը։ Ես կը հեռանամ։ Դուք ինձ չը հասկացաք, և այդ կը լինի իմ մխիթարութիւնը։ Մի բանով միայն ես չեմ մխիթարուիլ—որ այլևս ձեզ չեմ կարողանալ տեսնել... որովհետև ես ձեզ սիրում եմ, մինչև անգամ այնպէս, ինչպէս Դուք ցոյց տուիք ձեզ—հպարտ, սնափառ, դատարկ, և ես միշտ կը սիրեմ ձեզ։ Այդ բանը Դուք ինձ չէք կարող արգելել...

Սորանից յետոյ Հէկոնտալը «հպարտութեամբ գլուխը» վեր բարձրացնելով դուրս եկաւ առանց յետ նայելու։

Այս վարմունքը այնպէս ազդեց օրիորդի վրայ, որ նա երկու օր անցրեց գառանցանքների մէջ և երրորդ օրը արթնացաւ արդէն կոյր։ Վէպը վերջանում է նորանով, որ օրիորդի շուրջը հաւաքվում են կանայք և Հէկոնտալը, որ ծնկաչոք բռնում է օրիորդի ձեռքը, իսկ վերջինիս խաւարած աչքերից այդ րոպէին ցայտում են արտասուքի շիթերը։

«Կարաբասի» մէջ նկարագրուած է այդ տարբեր ազդեցութիւնը, որ ունենում է գիւղական պարզ կեանքը մարդու բնաւորութեան զարգացման վրայ և միւս կողմից քաղաքի անոտի անհամակրելի կողմերը։

Վէպիկի մէջ կան կենդանի կտորներ Հէկոնտալի սիրահարուած դրութեան վերաբերեալ, գիւղական և քաղաքի կեանքի պատկերներ։ Փարիզի կեանքի մասին հեղինակը ասում է Հէկոնտալի բերանով, որ այնտեղ ամենքը պարապած են լրտեսութեամբ և բամբասանքով, սմեն քայլափոխում նախանձը և չկամութիւնը աչքի է ընկնում և մարդիկ ժամանակ չունեն ապրելու, որովհետև նոքա ժամանակ չունին այնպէս լինելու, ինչպէս որ կան, որովհետև նոքա պատկանում են բոլորին և իւրաքանչիւրին, ուստի և բաղտաւոր չը կայ։ Չը նայելով թերևս հեղինակի ճիշդ գաղափարին, որ գիւղական կեանքը աւելի առողջ հոգով մարդիկ է ստեղծում —այս վէպը սակայն գեղարուեստական նշանաւոր թերութիւններից ազատ չէ։

«Կարաբասը» աւելի նկարագրութիւններով է լի քան թէ ճիշդ հոգեբանական դիտողութիւններով և պատկերներով։ Վէպի Ֆաբուլան ամբողջապէս զարգանում է պատահականութիւններով սկսած Հէկոնտալի սիրուց մինչև օրիօրդ Լիզաբէթի կուրութիւնը։ Կարծում ենք, որ «Կարաբասից» աւելի արժանաւոր վէպեր կարելի է պատրաստել «Չանդէսի» համար, թէև Մօնտէգիւի այս պատկերը յայտնի հետաքրքրութիւնից զուրկ չէ։

Երրորդ թարգմանական վէպը Տուրգենեվի «Ուրուականներն» է։

Հեղինակը պատմում է թէ ինչպէս մի գիշեր, երբոր նորա ջղերը հանգիստ չեն եղել, նա լսում է երազում մի ձայն, որ կանչում է նորան միասին գնալու։ Նոյն ձայնը միւս օրերն էլ կրկնվում են և վերջապէս տան առաջի պարտէզի մէջ մի օր նորան երևում է մի տեսիլ կնոջ դէմքով և նորան առնելով իւր թևերի տակ սահելով տանում է նորան զանազան երկիրներ։ Այս տեսիլը, որն իրան Էլիս է անուանում, մի քանի գիշեր իրար վրայ հեղինակին ման է ածում Ուայտ կղզին, տանում է Խտալիա, ուր օդային ճանապարհորդի առաջ վերակենդանանում են հին Հռոմի պատմութեան անցքերը, անցնում է Փարիզի վրայ, որի կարծրուկոշտ, ագահ, ժլատ ու տափակ կերպարանքը, նորա վաշխառուի աչքերը, ճերմակ ու կարմիր ներկերը խայթում են երջանիկ ճանապարհորդի տեսողութիւնը, Ֆրանսիայից անցնում են Գերմանիա, ուր աւելի աչքի են ընկնում դարաւոր անտառները և ճանապարհորդը մի տեսակ վեհ անդորրութիւն ու տրտմութիւն է զգում։ Երբոր երջանիկ մարդը իրան սիրող Էլիսի թևերի վրայ մօտենում է իւր հայրենիքի եթերքին, նա սաստիկ տխրում է.

—Այդ հարթ տարածութիւնը, որ սփռուած էր մեր տակ, համայն երկրագունդը իւր բնակիչներով, րոպէական անզօր, ճնշուած կարիքով, վշտով ու հիւանդութիւններով, այս անարգ հողին բևեռած այս մարդիկը, որ հազար անգամ ճանճից ստոր են, նոցա ցեխից շինած բնակարանները—և այդ բոլորը միանգամից զրզուեցրեց ինձ։

Այս կախարդական հոգեմայլութեամբ վերացած մարդը նոյն տեղ միշտ տեսնում է վերևից տխուր պատկերներ.

—Եւ ինչեր չկային ձայների այս քաոսում. աղաղակ և ճիչ, թիակների և տապարների հարուածներ, ձիերի տրոփիւն, շղթաների շառաչիւն, ժար բերողների երգեր, անմխիթար լաց ու կոծ, աղաչանք և պաղատանք, յուսակտուր և հրամայողական բացականչութիւններ։ Իսկ մեր չորս կողմը ոչինչ չէր երևում, ոչինչ փոփոխութիւն չկար։ Գետը հոսում էր մեզ մօտ խորհրդաւոր, բայց և դժնահայեաց կերպով։ Ափերը բոլորովին ամայի ու անապատ տեղեր էին։

Այս վերին աստիճանի սիրուն այլաբանութիւնը վերջանում է նորանով, որ անմահական Էլիսը սակայն մի անկերպարանք հրէշից թոյնաւորվում է, երբ որ յետ է բերում իւր սիրելի ճանապարհորդին հայրենիք։ Պատկերի մէջ հետևեալ կերպով է պատմած այս վերջնադէպը։

—Այս բանը աւելի զարհուրելի էր այն պատ-

ճառով, որ մի որոշ պատկեր չունէր, Դա մի Ձանր, մռայլ մութ դեղնագոյն, ոչ ամպ էր և ևոչ Ծուխ, օձի պէս սողում էր գետնի վրայ. Նա վերևից ցած էր տատանվում հաւասար ու չայն կերպով և նոյնպէս ցածից վեր բարձրանում. այդ տատանումը նման էր սովալլուկ գիշակեր թռչունի պտոյտի, որ թևերը շարժելով որսի ետևից է ընկնում. Նորա ազդեցութեան ներքոյ ես այդ տեսնում էի, ես այդ զգում էի,—ամեն բան ոչնչանում էր, ամեն ինչ պասպանվում էր. Փթած, մահաբեր սառնութիւնն էր գալիս Նորանից—այդ սառնութիւնից պղտորվում էր սիրտս, սևանում էին աչքերս և մազերս ցցվում էին. Այդ զորութիւնն էր անցնում. այն զորութիւնը, որին հակառակը չկայ, որին ամեն բան հպատակ է, որ առանց տեսնելու, առանց կերպարանքի, առանց իմաստի, ամեն բան տեսնում է, իմանում է, և որպէս վայրենի գիշակեր թռչուն ընտրում է իւր զոհերը և օձի պէս նոցա խեղդում է և լիզում իւր գեշ խայթով.—

«Ուրուականները» որպէս և ամեն մի գեղարուեստօրէն գրուած այլաբանութիւն բազմաթիւ մտքերի և զգացմունքների ծագման առիթ է տալիս և կարդացվում է շատ մեծ հետաքրքրութեամբ: Այլաբանական տարրը բնականից դուրս չէ գալի շատ, այլ այլաբանութիւնը լոկ գեղարուեստական ձև է: Բայց թէ ինչ է էլիսը, արդեօք սէրն է կախարդիչ թէ գաղափարը, որով մարդս արդարև կարող է ամբառնալ շրջապատող կեանքից և գիտել ստորև եղածը—այդ թողնում ենք ընթերցողին գտնելու:

Միւս անգամ կը հաղորդենք մեր տպաւորութիւնները «Հանդէսի» բանաստեղծութիւնների և թարգմանական յօդուածների մասին:

ՆՈՒՀԻՐՎԱՆ:

ՖԷԼԻԷՏՕՆ

ԶՈՒՐ ՅՈՅՍԵՐ

—

Վ Է Պ

(Զարունակութիւն)

X

Աւաւօտեան Մարիամը զարթնեց սովորականից ուշ: Նա աւելի դունատվել էր, նրա աչքերի տակը մի քիչ կապտած էին, կոպերը ուռած:

—Ո՞ւշ ես քնել գիշերը,—հարցրեց Ռուբէնը:

—Այո:

—Ինչո՞ւ:

—Կարդում էի:

Ռուբէնը զգաց, որ Մարիամը ստում է, որ նա գիշերը անքուն է անցկացրել, և գիտէր, որ այդ առաջին անքնութիւնը չէր: Ի՞նչ անէր, ինչով ամոքէր նրա վիրաւորված սիրտը: Խօսել Մելիք-Հարսեղեանի հետ, բացատրութիւն պահանջել: Բայց արդեօք Մարիամը կը տայ նրան իրաւունք այդ մասին որ և է խօսք բանալու բժշկի հետ: Ոչ երբէք. նրա խորին ինքնասիրութիւնը բնաւ չի թոյլ տալ այդ:

Սիրոյ փորձութիւնները տակաւին չը ճաշակած երիտասարդը, հարկաւ, չէր կարող լիովին կշռել յագուրդ չըստացած սրտի դառնութեան չափը: Բայց նա սիրում էր Մարիամին եղբայրական անձնուէր, անսահման սիրով, և այդքանը բաւական էր, որ քրոջ ամենաթեթև վիշտն անգամ սուր արձագանք գտնէր նրա զգայուն սրտում:

«Ի՞նչ անեմ, ինչ անեմ»,—կրկնում էր նա մտքում ամեն անգամ, լսելով քրոջ լուռ, ծանր և սիրտ թափանցող հառաչանքները:

Այն ինչ՝ օր օրի վրայ էր անցնում: Մելիք-Հարսեղեանը դարձեալ չէր երևում, Ռուբէնը երբեմն պատահում էր նրան փողոցում, բարևում էր և անցնում: Նա չէր կամենում մօտենալ բժշկին, գիտէր, որ սառնարիւն չէ կարող նրա հետ խօսել, գիտէր, որ կամայ թէ ակամայ պէտք է արտայայտի նրա մօտ իւր սրտի ատելութիւնը:—Մի բան, որ նա տակաւին չէր ուզում ցոյց տալ:

Իսկ Մարիամը. որքան ուզում էր չը մտածել, որքան ուզում էր իւր վիշտը, եթէ ոչ մոռանալ, գէթ փոքր ինչ մեղմացնել տնային գործերով և կարուձևի պարապմունքով, այնքան աւելի յամառութեամբ էին հալածում նրան անցեալ երջանկութեան յիշատակները:

—Հոգեակս, դու հիւանդ ես,—հարցրեց մի անգամ կարուձևի վարժուհին, որ վաղուց արդէն նկատել էր իւր ընկերուհու խորին թախիծը:

—Ինչից ես եզրակացնում, որ հիւանդ եմ:

—Նրանից, որ դու ուշադրութիւնով չես աշխատում, որ ես քեզ բան եմ բացատրում, չես լսում, միշտ միտքդ ուրիշ տեղ է: Այո, դու հիւանդ ես, բայց չը գիտեմ ինչ է հիւանդութիւնդ:

Մարիամի կրծքից ակամայ մի հառաչանք դուրս թռաւ, և նա գլուխը թեքեց կրծքին տխուր ու տրտում:

—Ես տեսնում եմ, հոգիս, որ դու մի վիշտ ունես,—խօսեց դարձեալ վարժուհին և, ձեռը դնելով նրա ուսի վրայ, շարունակեց.—ամօթ չէ, որ ինձանից թագցնում ես: Մոռացել ես մեր ընկերական սէրը: Ասա, հոգիս, պատմիր, ով գիտէ, կարելի է, մի բանով կարող եմ օգնել քեզ: Ինչ, դու, կարծես, ուզում ես արտասվել. Հաա, այժմ համոզված եմ, որ քո վիշտդ աղքատութիւնը չէ, մինչև որ չը պատմես, ձեռք չեմ քաշիլ քեզանից: Մարօ, սիրելի Մարօ, յայտնիր սրտիդ ցաւը քեզ սիրող ընկերուհուդ: Էէէ, այդ չեղաւ, դու փոխանակ խօսելու, լաց ես լինում...

Եւ իրաւ, Մարիամը չը կարողացաւ զսպել իւր արտասուքը: Ընկերուհու անկեղծ կարեկցութիւնը շարժեց նրա սիրտը: Նա, զգացված, ձեռները փաթաթեց վարժուհու պարանոցին, գլուխը դրեց նրա ուսի վրայ և սկսեց հեկեկալ: Անցան առաջին վայրկեանները, նրա սիրտը փոքր ինչ հանդարտվեց: Նա արտասուքը սրբեց, նայեց ընկերուհու աչքերին և այլ ևս չը կարողացաւ թագցնել այն, ինչոր վաղուց մի հոգեկան պահանջ էր զգում պատմելու մի մօտերիմ կնոջ, և ինչ որ ինքնասիրութիւնը մինչև այդ րոպէ չէր թողնում պատմելու: Ոչ մի խօսքով, ոչ մի թոյլ ակնարկով նա դժգոհութիւն չը յայտնեց Մելիք-Հարսեղեանի դէմ: Նա բոլոր մեղադրանքը բարդեց իւր վրայ, որ այնպէս մոռացաւ ինքն իրան, որ այնպէս չափշտակվեց, և ահա այսօր այդքան տանջվում է:

—Գիտես ինչ, սիրելիս,—ասաց վարժուհին խորին կարեկցութեամբ, լսելով ընկերուհու համառօտ պատմութիւնը,—ես ինքս թէև չեմ սիրահարվել մինչև օրս, բայց զգում եմ քո դրութիւնդ:

—Երանի քեզ, երանի, որ չես սիրահարվել,—գոչեց Մարիամը դողդոջուն ձայնով,—ախ, որքա՜ն նախանձում եմ քեզ:

—Նու, նախանձելու բան, ասենք, չը կայ. ով էր ինձ սիրողը, որ ես էլ նրան սիրէի. Իմ տգեղութիւնը ինձ ազատ է պահում այդ տեսակ փորձանքներից:

Վերջին խօսքը արտասանելիս վարժուհին, զսպելով իւր հառաչանքը, ծիծաղեց, իւր ընկերուհուն զուարճացնելու համար: Խնդապէս նա արդարացի չէր իւր վերաբերմամբ. նա այնքան էլ տգեղ չէր, որքան վատաբանում էր ինքն իրան. Հասակով Մարիամից քիչ ցածր, դէմքով գուցէ աւելի գեղեցիկ էր, եթէ անգութ ծաղիկը տասը տարի առաջ այդ գեղեցկութիւնը յափշտեան արատաւորած չը լինէր իւր խոշոր հետքերով:

—Հանգստացիր, սիրելիս,—մխիթարում էր նա Մարիամին մայրական քնքշութեամբ:—Պառաւների խօսքով ասած, գրողը տանի այդ տղամարդներին: Արժէ՞ նրանց համար այդպէս տանջվել, այն էլ քեզ նման սիրուն աղջկան: Ո՛ւմ վրայ ուշադրութիւն դարձնես, որ քեզ համար չի գժվի: Եթէ ինձ հարցնես, ես կ'ասեմ թող իսկի ոչ ոք էլ չը սիրի քեզ: Չէս կարող առանց տղամարդի ապրել: Աստուած վկայ, կարող ես: Ինչո՞ւ ես ապրում եմ, և վճռել եմ ապրել մինչև մահ: Գիտէս ինչից է, որ դու այդքան տանջվում ես. որովհետև դեռահասութիւնդ չես ունեցել մինչև օրը: Հապա, ինձ նման սիրիր աշխատանքը, տես կը մոռանաս, թէ չէ:

—Սովորցրու ինձ, սովորցրու մոռանալ, Սաթինիկ, և ես կը մոռանամ,—արտասանեց Մարիամը յուզված, նայելով ընկերուհու աչքերին և նախանձելով նրանց մէջ փայլող հոգեկան մխիթարիչ անդորրութեանը:

—Աչքիս վրայ, բարեհաճիր նստել բանիդ: Մարօ, հաւատացիր, աշխատանքից աւելի սրբելի բան չը կայ, մանաւանդ երբ տեսնում ես աշխատանքիդ պտուղները. Տէ՛ս, այդ կոպտացած մատներս իմ սրտի ամենամեծ մխիթարիչներն են: Արի վաղը առաւօտեան ինձ մօտ, տանեմ քեզ իմ ուսումնարան, դու կը տեսնես այնտեղ իմ խօսքերի ճշմարտութիւնը: Տես, այնտեղ իմ փոքրիկ աշակերտուհիները ինչպէս են բանում, ինչպէս են աշխատում: Անկեղծ եմ ասում, երբ նայում եմ նրանց, երբ տեսնում եմ, թէ ինչպէս նրանց փոքրիկ ձեռները օրից օր աւելի ու աւելի վարժվում են, մի հպարտութիւն եմ զգում, եւանդս աւելանում է: «Ահա իմ աշխատանքի պտուղը, ասում եմ ինքս ինձ, այդ աղջիկները, այդ աղքատ ընտանիքների զաւակները արհեստ են

սովորում ինձանից։ Նրանցից ամեն մէկը ժամանակին կարող է իւր գլուխը պահել, ով գիտէ, ծնողներին էլ պահել իւր ձեռքի աշխատանքով, ինչպէս ես այժմ պահում եմ ինձ և երկու փոքրիկ քոյրերիս»։ Մարօ, երկու տարի շարունակ արտասահմանում ես լսել եմ իմ ուսուցիչներից. «սիրիր աշխատանքը, սիրիր, և դու միշտ բաղդաւոր կը լինես»։ Այժմ տեսնում եմ, թէ որքան ճշմարիտ էին այդ խօսքերը։ Այո, աշխատանքը կարող է մարդուս բաղդաւորացնել։

—Երանի թէ ես էլ քո ճանապարհով գնացած լինէի,—ասաց Մարիամը, հառաչելով։—Դու քո բաղդը լսելքովդ ապահովեցիր, ես իմը թողի սրտիս կամքին։

—Չէիր կարող ուրիշ կերպ անել, հոգիս։ Իմ ճանապարհով գնալու համար հարկաւոր էր, որ դու ոչ գեղեցիկ լինէիր, ոչ հարուստ։ Հարբուտուխինը և գեղեցկութիւնը ծուլացնում են մարդուն։ Յիշում ես, ինչպէս ես ցաւեցի, ինչքան հառաչեցի առաջին անգամ, երբ լսեցի, որ քեզ գրկել են ժառանգութիւնից։ Ես ցաւում էի անկեղծ, որովհետև կարծում էի, որ հարստութիւնը քեզ համար կեանք է դարձել, որ առանց նրան դու դժբաղդ ես։ Բայց երբ դու հաստատ մտքով ինձ ասացիր, թէ ուզում ես հասարակ արհեստաւոր դառնալ, ուրախացայ։ Ես տեսայ, որ հարբուտուխինը քեզ չի փչացրել։ Այժմ ես ուրախ եմ, որ դու գրկվել ես քո օժիտից, բայց ևստուածծ ոչ անի գրկուիս քո միւս օժիտից—գեղեցկութիւնից։ Պահպանիր գեղեցկութիւնդ, պահպանիր և օրինակ դարձիր ուրիշների համար, թէ գեղեցիկ կինն էլ պէտք է աշխատի, թէ կնոջ զարդը միայն գեղեցկութիւնը չէ, ինչպէս կարծում են թեթեւամիտ մարդիկ։ Գիտես, ինձ շատերն են ասել, թէ եթէ ես տգեղ չը լինէի, արհեստ չէի սովորիլ, կը մտանէի միայն մարդու գնալու մասին։ Ձը գիտեմ, բայց կարծում եմ, որ սխալւում են. . .

Ընտեղ Սաթինիկը լուեց և խաղաղ ժպտաց Մարիամի երեսին։ Եւ նրա ժպիտը արտայայտեց մի տեսակ մելամաղձութիւն. արդեօք դա նրա անվերադարձնելի կերպով կորցրած գեղեցկութեան յիշատակը չէր։ Արագութեամբ յետ դարձնելով իւր խոհուն ճակատի վրայ սփռուած սեւ և գանգուռ մազերը, վարժուհին, կարծես, այդպիսով վանեց իւր թախիծը և աւելի ոգևորված շարունակեց գովել աշխատանքը։

Մարիամը լսում էր նրան սիրով և հաճութեամբ, նրա իւրաքանչիւր խօսքի մէջ որոնելով մի մի սփոքանք իւր վշտացած սրտի համար։

Նա տուն վերադարձաւ այդ օրը սովորականից ուշ։ Երկար ժամանակ Սաթինիկի խօսքերը հնչում էին նրա ականջում։ Սակայն վրայ հասաւ երեկոյեան խաւարը, և նա կրկին անձնատուր եղաւ իւր սովորական անյաղթելի վշտերին։

Երգէն հոկտեմբերի վերջն էր, աշնան խոնաւութիւնը տեղի էր տալիս մօտալուտ ձմեռուայ ցրտերին։

Թուբէնի համար աւելի ու աւելի զգալի էր դառնում նիւթական պակասութիւնը։ Հարկաւոր էին մի քանի նախապատրաստութիւններ ձմեռուայ համար, իսկ ամսական ռոճիկը նրանց առօրեայ պիտոյքներն անգամ չէր լրացնում։ Թուբէնը մասնաւոր դասեր էր որոնում, բայց անաջող, տարուայ միջոցը անյարմար էր, ամենքը խոստանում էին ամառուայ սկզբին։ Եւ մի կողմից նիւթականը, միւս կողմից քրոջ բարոյական դրութիւնը, օրից օր կրկնապատկում էին երիտասարդի հոգացողութիւնը։ Նա տեսնում էր, որ այդպէս թողնել Մարիամին չի կարելի, որ մի կերպ պէտք է վերջ դնել նրա վշտին։

—Մարօ,—ասաց նա մի օր ճաշից յետոյ,—արի այս երեկոյ թատրոն գնանք։

Մարիամը նախ զարմացաւ, ապա, նայելով եղբօր աչքերին, գուշակեց նրա միտքը և կատակի ձևով պատասխանեց.

—Գնանք, երևի փող շատ ունես գրպանումդ։

—Ունեմ, ունեմ, այսօր ռոճիկս ստացել եմ։ Այսուհետև աւելի կունենամ, խոստացել են դասերս աւելացնել։ Բացի դրանից, անպատճառ մասնաւոր դասեր էլ կը գտնեմ։ Ձուտով, շուտով մենք կ'ապահովուենք նիւթապէս,—աւելացրեց նա շինծու ոգևորութեամբ։

—Լաւ, երբ կը հարստանաս, այն ժամանակ զուարճութեան մասին էլ կը մտածենք։ Իսկ այժմ իրաւունք չունենք։

—Իրաւունք,—գոչեց Թուբէնը,—ով է այդ իրաւունքը մեզանից խլում։ Մարօ, խնդրում եմ, աշխարհից բոլորովին մի կտրվիլ։ Լաւ չէ, քեզ համար մի քիչ զուարճութիւն անհրաժեշտ է։ Նայիր հայելիի մէջ, տանը փակված մնալով, տես ինչպէս փոխվել ես։

Եւ նա շարունակեց համոզել։ Ձգայութիւն չէ ամսական գոնէ մի երկու անգամ մի տեղ գնալը։ Ով աշխատում է, նա իրաւունք ունէ և՛ զուարճանալու։ Ինչու փախչել հասարակութիւնից։—Նրա համար, որ առաջ հարուստ էին համարվում, այժմ աղքատ են։

—Եթէ այդ է պատճառը, նախապաշարմունք է, սիրելի Մարօ։ Աղքատութիւնը ամօթ բան չէ, ամօթ է աղքատութիւնից ամաչելը։ Ոչ ոք իրաւունք չունի մեզ ծաղրելու։ Իսկ եթէ ծաղրողներ լինեն, միթէ չես կարող այդպիսիներին արհամարհել։

Նա շատ լաւ գիտէր, որ Մարիամի հասարակութիւնից փախուստ տալու պատճառը աղքատութեան զգացումը չէ, բայց շեշտելով այդ հանգամանքը, կամենում էր կպչել նրա ինքնասիրութեանը։ Գիտէր, որ միայն այդպիսով կարող է համոզել քրոջը, եթէ կարելի է համոզել։

—Ես ոչ ոքից չեմ քաշվում մեր աղքատութեան պատճառով,—պատասխանեց Մարիամը զգացված,—խնդրում եմ այդ մասին այսուհետև էլ չը խօսես։

—Որ այդպէս է, թատրոն չենք գնալ, այլ մի ուրիշ տեղ։ Վաղը երեկոյեան հայոց բալն է. ես շատ եմ ցանկանում մի անգամ մի տեղ տեսնել այստեղի հասարակութեանը։ Գնանք վաղը միասին։

Մարիամը գլուխ թեքեց կրծքին։ Նրա յօնքերը սեղմուեցին, ճակատը դարձեալ պատեց տխրութեան քօղով։ Յիշեց նա, որ այդ երեկոյթի կարգադրիչը Նատալիան է լինելու։ Գնալ այնտեղ, ուր այդ գոռոզ արարածը, նրա անհաշտ հակառակորդը, իւր փքված մօր հետ պիտի փայլէ—ոչ, ոչ, նա չի կարող։ Սակայն նոյն վայրկեանին նրա գլխում զարթնեց մի այլ միտք։—Անշուշտ Մելիք-Բարսեղեանը այնտեղ կը լինի, անշուշտ նա չի արհամարհիլ մի այդպիսի հանդիսաւոր երեկոյթ։ Ինչ կանի բժիշկը այդ երեկոյ, ում հետ կը խօսի, ում հետ կը զբօսնի, կամ գուցէ կը պարի։ Եւ զգում էր նա, որ չէ կարողանում դիմանալ իւր սրտի ճգտմանը, որ, հակառակ իւր կամքի, հիւանդոտ հետաքրքրութիւնը մղում է նրան դէպի այնտեղ, ուր պէտք է լինէր բժիշկը։ Այո, պէտք է գնալ, պէտք է տեսնել նրան։ Այդ երեկոյ վերջնապէս կը վճռուի նրա բաղդի խնդիրը։ Հասարակութեան մէջ մի թեթեւ վարմունք, մի որոշ շարժմունք անգամ կարող է դրականապէս պարզել բժշկի հոգին։

«Այն ժամանակ միայն ես կը համոզվեմ և կը հանգստանամ», վճռեց Մարիամը։

Հետևեալ օրը դարձեալ տօն էր։ Թուբէնը օգնում էր Մարիամին տնային գործերում, երբ պատշգամբի վրայ յանկարծ երևեցաւ Հալաբեանը։ Թուբէնը չը զարմացաւ, բայց փոքր ինչ շփոթվեց։ Նա դուրս շտապեց հիւրին դիմաւորելու և յարգանքով հրաւիրեց ներս։

—Ես եկել եմ յայտնելու, որ ձեր հօրեղբօր գործերը յաջող են գնում,—ասաց ամուրին, միանգամայն ընկերաբար թօթվելով երիտասարդի ձեռը։

—Եւ, ի հարկէ, ձեր շնորհով,—աւելացրեց Թուբէնը, հրաւիրելով նրան նստել,—թոյլ տուէք կրկին անգամ յայտնել շնորհակալութիւնս։

—Ես երաշխաւոր եղայ, նրա երկու վեքսելները փոխեցին՝ մէկը վեց հազարի, միւսը ութ հազարի,—շարունակեց Հալաբեանը մի առանձին ինքնագոհութեամբ։—Էգուց էլ մի քիչ փող կը գտնեմ, կը տամ, յետոյ էլ վախենալու բան չը կայ, ձեր հօրեղբայրը կ'ազատվի անպատուութիւնից։ Թող նա գայ, ձեր ոտները համբուրի. դուք էք նրան ազատողը։

Արտասանելով այս խօսքերը միւս սենեակում լսվելու չափ բարձր ձայնով, Հալաբեանը նայում էր աչ ու ձախ։ Պարզ էր, որ նա Մարիամին էր սպասում։

Դարձեալ Թուբէնը ոգևորվեց, դարձեալ Հալաբեանը նրա առաջ պատկերացաւ իբրև մի ազնիւ, բարեսիրտ մարդ, իւր տեսակի մի ասպետ։ Մտքում նա մինչև անգամ մեղադրեց Մարիամին, որ այնքան ուշանում էր մի այդպիսի հիւրին ներկայանալու։ Թուում էր նրան, թէ ամենաչնչին մի անուշադրութիւն չը պէտք է թոյլ տալ այդ մարդու վերաբերմամբ, թէ նա արժանի է ամենալսորին չարգանքի, թէ վերին աստիճանի անքաղաքավարութիւն կը լինի չը չարգել նրան, մի այդպիսի հազուագիւտ մարդու։ Ահա ինչու նա չը կարողացաւ զսպել իրան, անցաւ միւս սենեակ և Մարիամին խնդրեց շուտով դուրս գալ։

—Ես չեմ կարող նրան երևալ,—հակառակեց Մարիամը,—դու զբաղեցրու, ես գործ ունեմ։

—Անկարելի է, նա կը կարծի, որ չես ուզում նրա երեսը տեսնել, ամօթ է։ Մարօ, նա մեր հօրեղբօրը ազատել է խայտառակութիւնից, հասկանում ես։

Մարիամը ակամայ հնազանդվեց եղբօր թախանձանքին. ակամայ, որովհետև այլ ևս կասկած չունէր, որ Հալաբեանի այցելութիւնը աննպատակ չէ։ Նա փոխեց իւր վերնազգեստը և դուրս եկաւ։

Վայրկենաբար ամուրիի հոգեկան տրամադրութիւնը փոխվեց։ Նա հազիւ կարողացաւ զսպել իւր ուրախութիւնը, շտապեց առաջ և, յարգանքով սեղմելով օրիորդի ձեռը, արտասանեց.

—Յուսով եմ, որ իմ այցելութիւնը չանդգնութիւն չէք համարիլ. մեր վաղուցվայ ծանօթութիւնը ինձ իրաւունք տուեց։ Առիղջ էք։

Մարիամը գլուխը թեթև խոնարհեցրեց և նստեց սենեակի մի անկիւնում։

—Եկել եմ ձեր եղբօրը չանդիմանելու, —շարունակեց Հալաբեանը,—ամեն օր տանս առաջով անցնում է, գոնէ երկու օրը մի անգամ էլ չի մտնում։ Չատ ցաւում եմ, որ բարեկամութիւնը որդուց որդի ժառանգաբար չի անցնում, —դարձաւ նա Ռուբէնին, — եթէ իմանայիք ձեր հայրը ինչքան էր սիրում ինձ, այդպէս չէիք վարվիլ ինձ հետ։ Հանգուցեալը մի օր ինձ չը տեսնելիս, տխրում էր։ Միշտ ինձ ասում էր «ես քեզ սիրում եմ որդուս պէս, որովհետև քո հանգուցեալ հայրդ ինձ սիրել է իւր որդու պէս»։ Ախ, Գրիգորի Միրոնովիչ, ես երբէք չեմ մոռանալ քեզ։

Եւ նա վերջին խօսքերը մի այնպիսի զգացուած ձայնով և խորհրդաւոր եղանակով արտասանեց, որ կարելի էր կարծել, թէ իւր հարազատ հօր մասին է խօսում։

Հօր յիշատակը դուրս հանեց Մարիամի կրծքի խորքից մի հառաչանք, որ նա, սակայն, շտապեց զսպել։

Հալաբեանը շարունակեց իւր խօսքը և հետզհետէ մէկից միւսին անցնելով, սկսեց խօսել իւր մասին։ Նա գանգատվեց, որ իւր օրերը տխուր են անցնում։ Կեանքը առհասարակ ձանձրալի բան է։ Նա բաւական զզուել է հասարակութիւնից, չգիտէ ինչպէս հեռու ապրել նրանից։

Յետոյ նա շատ անփոյթ կերպով ակնարկեց իւր հասարակական դիրքը, իւր հարստութիւնը, այն չարգանքը, որ վայելում է գանազան շրջաններում։ Եւ այս բոլորը նա իւր խօսակցութեան մէջ անցկացրեց մի այնպիսի վարպետութեամբ, օրինակներով և փաստերով, որ թւում էր, թէ խօսում է լոկ խօսելու համար և ոչ մի ուրիշ նպատակով։

Քանի մի րոպէ Մարիամի կասկածը մեղմացաւ, տեսնելով, որ Հալաբեանը խօսելիս աւելի Ռուբէնին է դառնում, քան իրան։ Նա չը գիտէր, որ այդ մի տեսակ քաղաքականութիւն է ամուրիի կողմից։ Նա չիմարութիւն համարեց իւր երկիւղը մի մարդուց, որ բացի բարեսիրտ և քաղաքավարի լինելուց, առ այժմ ոչինչ չէ ցոյց տալիս։ Նա մինչև անգամ ինքը սկսեց խօսել Հալաբեանի հետ։ Ռուբէնը հաղորդել էր նրան մօսիօ Վախվախեանի պատմած անցքը իշխան Սահարունիի մասին։

—Էէէ ոչինչ բան է,—պատասխանեց Հալաբեանը օրիօրդի հարցին.—իշխանը մի փոքրիկ վէճ է ունեցել ձեր հօրեղբօր պարտատէրներից մէկի հետ, ուրիշ ոչինչ։

Ընտանելի էր Հալաբեանի համար խօսել այն բաների մասին, որ չէին բղխում նրա սրտից, որ չէին համապատասխանում նրա այժմեան զգացմունքներին։ Խօմ երկար թագցնել չէ կարելի, խօմ, վերջապէս, պէտք է պարզուի նրա միտքը։ Բայց ինչպէս պարզել—դիմել ուղղակի Մարիամին։—Ոչ, ոչ, այդ անկարելի է։ Եւ Հալաբեանը զգում էր, որ երբէք այդչափ քաջութիւն չի ունենալ։ Դիմել Ռուբէնին։—Այդ աւելի դիւրին է։ Նա բարեսիրտ երիտասարդ է, խելօք է, ժամանակակից, ազատամիտ։ Նա է Մարիամի միակ մեծը և պաշտպանը, և նրա հետ կարելի է պարզ սրտով խօսել։

Մինչ նրա ուղեղը զբաղված էր այս խորհրդածութիւններով, լեզուն խօսում էր այլ բաների մասին, ժամանակը անցնում էր։ Նա չէր կամենում ձանձրացնել Մարիամին, պէտք էր հրաժեշտ տալ, և նա ոտքի կանգնեց։

—Ես միշտ տանն եմ լինում, որ ժամին էլ գաք, ուրախ կը լինեմ,—ասաց նա, կրկին և կրկին լանդրելով Ռուբէնին այցելել իրան։

Նախ քան դուրս գալը, նա մի հայեացք ձգեց իւր շուրջը։ Մինչև այդ րոպէ նա լաւ ուշադրութիւն չէր դարձրել աղքատիկ բնակարանի անշուք կահ-կարասիի վրայ։ Անսովոր չքաւորութիւնը տարօրինակ ազդեցութիւն գործեց նրա վրայ։ Նա և՛ ուրախ էր, և՛ խըղճում էր Ռուբէնին ու Մարիամին։ Ահա, որպիսի հաճութեամբ նա կ'օգնէր, եթէ իմանար, թէ չի վիրաւորիլ նրանց ինքնասիրութիւնը։ Նա չէր ուզում դուրս գալ, նա կամենում էր որ և է կերպով առաջարկել իւր օգնութիւնը Ռուբէնին։ Յանկարծ մի միտք լուսաւորեց նրա ուղեղը։ Մարիամը արդէն անցել էր իւր սենեակը, րոպէն չարմար էր։

—Դուք ժամանակ ունէք մասնաւոր դասերով պարապելու,—հարցրեց նա Ռուբէնից։

—Ինչու չէ։

—Ես մի քրոջ որդի ունեմ, գիմնազիայի հինգերորդ դասատան աշակերտ է։ Դուք, երևի, նրա մեծ եղբայրներին ճանաչում էք։ Անկարգ տղերք են, ես գիտեմ, որ դուք նրանց չէք հաւանիլ։ Բայց այդ մէկը ամենից փոքրն է, խելօք տղայ է, ես միայն նրան եմ սիրում, ուզում եմ, որ միւս եղբայրների նման կիսատպռատ ուսում չ'առնի։ Կը համաձայնի՞ք դասեր տալ նրան մինչև հարցաքննութիւնների ժամանակ։

Ռուբէնը հաճութեամբ յայտնեց իւր պատրաստականութիւնը։

Նա ուրախացաւ, որ մի բանով կարող է իւր հօրեղբօր օգնողի բարութեան փոխարէնը մասամբ հատուցանել։

—Երբ որ հրամայէք, պատրաստ եմ։

—Թէ ժամանակ ունէք, հէնց էգուցվանից սկսեցէք։ Գիտէք, ես ուզում եմ նրան միւս եղբայրներից հեռացնել։ Նրան կը բերեմ իմ տուն, դուք էլ տանս կը պարապէք նրա հետ։ Պայմանների մասին չեմ խօսում, որքան կամենաք...

—Առանց որևէ է պայմանի, պարոն Հալաբեանը,—ընդհատեց Ռուբէնը։—Դուք իմ հօրեղբօրս օգնելիս, պայման չ'առաջարկեցիք։

—Լաւ, լաւ, էգուց եկէք, կը խօսենք,—շտապեց աւելացնել Հալաբեանը, վախենալով, որ մի գուցէ Ռուբէնը բոլորովին հրաժարվի։

Ամուրին հեռացաւ մի փոքր թեթևացած սրտով։ Անհրաժելի էր նրա համար ամեն կերպ պարտաւորեցնել Ռուբէնին և այդպիսով մասամբ բարոյապէս կաշկանդել նրան։

—Լսեցի՞ր, Մարօ,—դարձաւ Ռուբէնը Մարիամին, Հալաբեանին ճանապարհ դնելուց յետոյ, մտնելով քրոջ սենեակը,—նա ինձ իրենց տրեց, որ իւր քրոջ որդու հետ պարապեմ։ Ուրեմն ես մի փոքրիկ բանով պարտքս կը թեթևացնեմ, այնպէս որ...

—Ռուբէն, — ընդհատեց Մարիամը եղբօր խօսքը,—այդ պարոն Հալաբեանը շատ լաւ մարդ է, բարի է, բայց...

—Ինչ՞։

—Ես չեմ ուզում, որ նա մեզ այցելէ։

—Պատճառը։

—Հէնց այնպէս, չեմ ուզում։

—Աստ, Մարօ, առանց պատճառի չի լինիլ, ասա, եթէ մի բան կայ։

—Ինչ կապ կայ մեր և նրա մէջ, աստ խնդրեմ. նա հարուստ է, մենք աղքատ։

—Նա հարուստ է, մենք աղքատ — յետոյ, այդ է բոլորը։

—Ես կարծում եմ այսքանն էլ բաւական է, որ մնացեալը դու հասկանաս։ Ուրիշ ասելիք չունեմ։

Արտասանելով վերջին խօսքը, Մարիամը հանդարտ վերկացաւ տեղից ու դուրս գնաց։ Ռուբէնը զարմացած նայեց նրա ետևից, մի քանի վայրկեան մտածողութեան մէջ ընկաւ։ Առաջին անգամ նրա սրտում ծագեց մի թոյլ կասկած Հալաբեանի մասին։

«Քոյրս ճշմարիտն է ասում,—խօսեց նա մտքում,—մեր և այդ հարուստ Հալաբեանի մէջ ինչ կապ կարող է լինել։ Ինչ կնպ... չէ որ նա իմ հօր բարեկամն է։ Յետոյ։ Ոչ, Մարօն ճշմարիտն է ասում։ Մինչ ես այդքան պարզամիտ եմ։ Մինչ Հալաբեանի բարեկամութիւնը մի ուրիշ նպատակ ունէ։ Ահա հէնց այդ բանը պէտք է իմանալ...

Եւ ամբողջ օրը նա քրոջ խօսքերի ազդեցութեան տակ էր։ Որքան նա թափանցեց, որքան ստիպեց, Մարիամը այլ ևս ոչինչ չը խօսեց այդ մասին, և միայն կրկնում էր.

—Ինքդ մտածիր։

—Հասկանում եմ,—ասաց, վերջապէս, Ռուբէնը,—այդպիսի մի մարդ, ինչպիսին է Հալաբեանն է, եթէ մի նպատակ ունէ մեր վերաբերմամբ, այդ նպատակը ուրիշ ոչինչ չէ կարող լինել, եթէ ոչ... նա ամուրի է և դուշէ... Բայց, Մարօ, ես այդ կողմից բոլորովին վախ չունեմ։ Դու անկախ ես... հասկանում ես, ոչ ոք, ոչ ոք չի կարող ճնշումն գործել քեզ վրայ... հասկանում ես։ Գալով ինձ, երբէք, բացի եղբայրական խորհրդից, ոչինչ իրաւունք մի սպասիլ ինձանից։ Այո, ես հասկանում եմ միտքդ։ Բայց դու երեխայ չես, իսկ ես միշտ ոյժ կ'ունենամ քեզ պաշտպանելու ամեն տեսակ քեզ համար անախորժ բաներից...

—Ես այդ գիտեմ, Ռուբէն,—արտասանեց Մարիամը, տեսնելով, որ եղբայրը հասկացել է իւր միտքը,—շնորհակալ եմ։—Մի բան միայն կ'ասեմ. ես Հալաբեանի մասին վատ կարծիք չունեմ, բայց, կրկնում եմ, նրա այցելութիւնը ինձ ճնշում է։ Իսկ դու ինքդ կարող ես նրա հետ բարեկամ մնալ։

—Եթէ այդպէս է, ես այնպէս կ'անեմ, որ նա երկրորդ անգամ այստեղ չը գայ,—վճռեց Ռուբէնը, վերջ տալով խօսակցութեանը։

ՉԻՐՎԱՆԶԱԴԷ

(Կը շարունակուի)

ՋԱՆԱՋԱՆ ԼՈՒՐԵՐ

Յատկապէս Մկրտիչ Սանասարեանի թաղման ժամանել են Թիֆլիս զանազան քաղաքներից այլ և այլ անձինք։ Մամուլի ներկայացուցիչներից յիշենք այստեղ պ.պ. Պետրոս Սիմէօնեանցին (Արարատ), Տօնապետեանին և Տիգրան Արփիարեանին (Ա-րևելք)։

—

Ինչպէս հաղորդել էինք «Արձագանքի» անցեալ համարում՝ ամսոյս 14-ին Հանգուցեալ Մ. Սանասարեանցի դին հասել էր Բաթումի նաւահանգիստը, որտեղից ամսոյս 15-ին առաւօտեան գնացքով Բժ. Լևոն Տիգրանեանցի ուղեկցութեամբ բերուեցաւ Թիֆլիսի կայարանը։ Միևնոյն գնացքով Թիֆլիս ժամանեց որպէս Թիւրքիայի Հայոց ներկայացուցիչ դեր. Խորէն Արքեպիսկոպոս Նար-Պէյն, որին ընդունելու համար թեմից որբազան Առաջնորդը ուղարկել էր Թիֆլիսի կայարանը մի քանի քահանաներ։ Երկաթուղու կայարանում Նորին Սրբազնութեան և Հանգուցելոյն ընդառաջել էին պ. պ. Ֆ. Եւանգուլեան, Ա. Յովհաննիսեան և այլք։

Հանգուցեալի դին այժմ բերուած է Թանգոյեանց եկեղեցու ուսումնարանի դահլիճը, որտեղից այսօր Հանդիսաւոր յուղարկաւորութեամբ կտարուի Վանաց աւագ եկեղեցին, ուր և կ'ամփոփուի նորա մարմինը։

—

«Հիւսիսային դրծակալութեան» հեռագրում են Աթէնքից, որ Տաճկահայաստանում «Հայերը ապստամբել են. նոցա և քրդերի մէջ տեղի է ունեցել մի քանի ճակատամարտ, երկու կողմից էլ մեծամեծ կորուստներ են եղած»։

—

Թիֆլիզի 2-րդ արական գիմնազիօնի VIII դասարանից այս տարի ուսման ընթացքը աւարտել և հասունութեան վկայական ստացել են 17 հոգի, որոնցից 6 հոգի հայ են. 1) Միքայէլ Ազաչանեան, Թիֆլիզեցի. 2) Աւետիք Ահարոնեան, Խօլօսարի գիւղից. 3) Գաբրիել Զավրեան, Թիֆլիզեցի. 4) Միքայէլ Մգարէուլեան, Ախալգօրեցի. 5) Յակովբ Սուսանեան, Թիֆլիզեցի. և 6) Յովսէփ Խուանուեցեան, Զուլհեցի։ Սոցանից Մգարէուլեան պարգև է ստացել արծաթէ մեդալ։ Միւս 11 հոգուց—6 ռուս է, 2 գերմանացի, 2 վրացի և 1 իմերէլ։

—

Հանգուցեալ Մկրտիչ Սանասարեանցի մարմնի վրայ ճանապարհին պսակներ են դրել հետևեալ հայ հասարակութիւնները և հաստատութիւնք ու մասնաւոր անձինք.

1. Փարիզի հայ գաղթականները.
2. Փարիզի հայ ուսանողական միութիւնը.
3. Մարսէյլի հայ գաղթականութիւնը.
4. Կ. Պոլսոյ ուսումնասիրաց ընկերութիւնը.
5. Կ. Պոլսոյ Գալֆայեան աղջկանց որբանոցը.
6. Կ. Պոլսոյ ազգային կենտրոնական վարչութիւնը.
7. Գաբրիէլ Նորատունկեանը.
8. Կիւլպենկեանները.
9. Սենեկապետ Պաղտասար Յակոբեանը.
10. Կովկասի Հայոց Բարեգ. Ընկերութեան Բաթումի տեղական Վարչութիւնը.
11. Բաթումի վրացիները.
12 Կիլիկեցի Տ. Ղազիրեանը։

—

Խմբագրութիւնս ստացաւ «Խաչակիր մանուկներ» վերնագրով պատմական վէպիկը, Թարգմանութիւն պ. Կոստանդին Մարտիրոսեանցի։ Այս, 64 էջերից բաղկացած, գրկոյկը իւր բովանդակութեամբ մանուկների և պատանիների ընթերցանութեան համար մի բաւական սիրուն նիւթ էր։ Նկարագրուած է այդ վէպիկում 13-րդ դարում տեղի ունեցած մանկական խաչակիր արշաւանքը Ֆրանսիայից դէպի Երուսաղէմ։ Գրքոյկը կարոյացվում է հետաքրքրութեամբ և ապաւորութիւն է անում ընթերցողի վրայ։ Կարծում ենք, որ նա կարող է բարերար ազդեցութիւն գործել մանուկ ընթերցողների վրայ։ Թարգմանչի լեզուն բաւական սահուն էր թէև, ինչպէս մեր բոլոր թարգմանութիւնների մեծ մասի լեզուն, զերծ չէ թերութիւններից և տեղ տեղ խոշոր սխալներից։

Գրքոյկի տիպը և թուղթը մաքուր են, գինը մէջակ է՝ 20 կոպէկ։

—

Ստացանք «Այց Թիւրքաց Հայաստանին» (հայ տուրիստի յիշողութիւններից), ճանապարհորդութիւն Լևոն Սարգսեանցի, արտատպուած «Մուրճ» ամսագրից։ Որովհետև ճանապարհորդութիւնը վերաբերվում է Տաճկահայաստանին, ինքն ըստ ինքեան այս գրքոյկը հայ ընթերցողի ուշադրութեան արժանի է, ուստի կարգացվում է բաւական հետաքրքրութեամբ։ Գրքոյկը արժէ 60 կոպ., որ թանկ չէ։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Դպրոցական լուրեր։ Վեհափառ Կաթուղիկոսի շրջաբերականը։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ։—† Մկրտիչ Սանասարեան։ Նամակ Փարիզից։ Ս. Տ. Ս. Էջմիածնի իսօսած դամբանականի բովանդակութիւնն։ Մ. Սանասարեանի դին Ճանապարհին։ Նամակ Կ. Պոլսից։ Մեծ բարերար Մ. Սանասարեանի յիշատակի Սանասարեան վարժարան։

ՄԱՏԵՆԱԽՕՍՈՒԹԻՒՆ։ «Հանդէս գրականական և պատմական»։

ՓԵԼԻԵՏՕՆ.—Զուր յոյսեր։

ՋԱՆԱՋԱՆ ԼՈՒՐԵՐ։

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ։

Խմբագիր-հրատարակիչ
ԱՐԴԱՐ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԿԱՏԱՐԻՆԻ ՍԱՐԳՍԵԱՆ և բժիշկ ԼԵՒՈՆ ՏԻԳՐԱՆԵԱՆՑԸ յայտնում են՝

ՄԿՐՏԻՉ Ս. ՍԱՆԱՍԱՐԵԱՆՑԻ

ազգականներին, ծանօթներին և հանգուցեալի յիշատակը յարգողներին, որ Հանգուցեալի մարմինը Թանգոյեան ս. Աստուածածին եկեղեցուց, ուր պատած է ժամանակաւորապէս, դուրս կը բերուի այսօր, կիրակի, յունիսի 17-ին, առաւօտեան ժամը 10-ին և կը տանուի Վանքի մայր եկեղեցին։

Երևանայ Հայոց Թեմական Դպրանոցի Հոգաբարձութիւնը, հրաւիրում է Դպրանոցի համար տեսուչ, որ պիտի լինի ուսումնասիրատ հարձրագոյն Դպրոցներում։ Ցանկացողք կարող են դիմել Հոգաբարձութեանը մինչև յուլիսի 25-ը, ներկայացնելով ուսման վկայական և ծառայութեան ցուցակ։ Տեսչի ռոճիկ նշանակուած է, բացի դասերից, տարեկան 1200 րուբլի։

Երևանի Հայոց Թեմական Դպրանոցի Հոգաբարձութիւնը Համաձայն Նորին Վեհափառութեան ամենայն Հայոց կաթուղիկոսի, 30 անցեալ մայիսի № 212, կոնդակի, հրաւիրում է Դպրանոցում աւանդելի բոլոր առարկաների համար ուսուցիչներ, որոնք պէտք է աւարտած լինին բարձրագոյն ուսումնարաններում կամ Սուրբ Էջմիածնի ճեմարանի մասնագիտական բաժնում. իսկ եթէ այդպիսները չգտնուին, Դպրանոցի առարկաների դասաւանդութեան մէջ բազմամեայ փորձառութեամբ հարկաւոր համարութիւնը ձեռք բերած ուսուցիչներ։ Դասերի վարձ նշանակուած է՝ հարձրագոյն Դպրոցում աւարտածներին դասական չիսուն րուբլի, իսկ միւսներին երեսուն։ Գծագրութեան, նկարչութեան, գեղագրութեան և ձայնագրութեան դասերին 25-ական րուբլի։ Իւրաքանչիւր ուսուցիչ կարող է ունենալ շաբաթական 16—24 դաս։ Հրաւիրում են երկու երկրորդ նախակրթարանների համար երկու ուսուցիչ, օրական չորս դասով, տարեկան 500 րուբլիով, իսկ առաջին նախակրթարանների համար նոյնպէս երկու ուսուցիչ, օրական երեք դասով, տարեկան 400 րուբլիով։ Ցանկացողները կարող են դիմել Հոգաբարձութեանը, ներկայացնելով ուսման վկայական և ծառայութեան ցուցակ, մինչև յուլիսի 25-ը։

Дозволено цензурою. Тифлисъ, 15 Іюня 1890 г. Տպարան Յ. Մարտիրոսեանցի։ Типографія И. Мартиросіанца, Орб. ул., д. № 1—2.